ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1950 *Общественные науки*

Հ. Էլչիբեկյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան նոր դարաշրջան բացեց մարդկության պատմության մեջ։

Ճեղքելով իմպերիալիզմի ճակատը Ռուսաստանում, իշխանությունը հանձնելով բանվոր դասակարգին, Հոկտեմբերյան ռևոլուցիան սկիզբ դրեց պրոլետարական ռևոլուցիաների դարաշրջանին։ «Այս նշանակում է,— գրում է ընկեր Ստալինը,— որ Հոկտեմբերյան ռևոլուցիան բաց արեց նոր դարաշրջան, իմպերիալիզմի երկրներում պրոլետարական ռևոլուցիաների դարաշրջանը»։[1]

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան խարխլեց իմպերիալիզմը ոչ միայն այսպես կոչված մետրոպոլիաներում, այլև իմպերիալիստական պետությունների տիրապետությունը գաղութային և կախյալ երկրներում։ Նա գաղութային և կախյալ երկրների ժողովուրդներին ոտքի հանեց իրենց ստրկացնող կեղեքիչների դեմ։

Խարխլելով իմպերիալիզմի հիմքերը ինչպես մետրոպոլիաներում, այնպես և կախյալ ու գաղութային երկրներում, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան դրանով իսկ մահացու հարված հասցրեց ամբողջ կապիտալիստական սիստեմին։ «... Հոկտեմբերյան ռևոլուցիան,— գրում է ընկեր Ստալինը,— համաշխարհային կապիտալիզմին մահացու վերք հասցրեց, որից նա այլևս երբեք ուշքի չի գա։ Հենց այս պատճառով էլ կապիտալիզմն այլևս երբեք չի վերադարձնի իրեն այն «հավասարակշռությունը» և այն «կայունությունը», որ նա ուներ մինչև Հոկտեմբերը»։[2]

Սկսվեց կապիտալիզմի խորտակման դարաշրջանը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան ստեղծեց սովետական բազմազգ հզոր պետություն՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, որի անբաժանելի մասն է կազմում Սովետական Հայաստանը՝ Հոկտեմբերյան ռևոլուցիայի զավակը։ ՍՍՌՄ ստեղծմամբ, նրա ամրապնդմամբ ապացուցվեց ազգային ժողովուրդների ազատագրման պրոլետարական, ինտերնացիոնալ մեթոդի, ինչպես և լրիվ իրավահավասարության սկզբունքով նրանց եղբայրական միության հնարավորությունը և նպատակահարմարությունը։

ՍՍՌՄ միջազգային նշանակությունը որպես սոցիալիզմի և դեմոկրատիայի գործի պաշտպանի, փայլուն կերպով հանգեցնում էր այն մեծ ազատագրական դերում, որ խաղաց Սովետական Միությունը երկրորդ համաշխարհային պատերազմում։ Սովետական ժողովրդի փայլուն հաղթանակը ֆաշիստական Գերմանիայի դեմ մղված պայքարում, ցույց տվեց, որ սովետական հասարակարգը հանդիսանում է բոլորից կենսունակ և փայլուն հասա-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 10, էջ 273։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 10, էջ 279։

բանվորը ամբողջ աշխարհում։ Սովետական ժողովրդի հաղթանակի նշանակությունը հակաֆաշիստական և միջազգային բանվորական և ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետագա ծավալման համար։ Սովետական ժողովրդի փայլուն հաղթանակը ազատագրեց Կենտրոնական և Հարավ-արևելյան Եվրոպայի ժողովուրդներին ֆաշիստական Գերմանիայի սարկաքիզությունից, փրկեց նրանց անգլո-ամերիկյան իմպերիալիստների լծի տակ ընկնելու վտանգից և հնարավորություն տվեց, որ նրանք իրենք որոշեն իրենց բախտը, իրենց զարգացման ուղիները։ Ջախջախելով ճապոնական ռազմամոլներին, Սովետական Միությունը հնարավորություն տվեց չինական ժողովրդին ազատագրվելու ճապոնական և ամերիկյան իմպերիալիստների լծից և բռնելու զարգացման նոր ուղի։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայից հետո Սովետական Միությունում սոցիալիզմի կառուցման մեծ փորձը ժողովրդական դեմոկրատիայի երկրներին ցույց է տալիս դեպի սոցիալիզմի հաղթանակը տանող ճիշտ ուղին։ Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Բուլգարիայի, Ալբանիայի ու վերջերս իրեն ազատագրած Չինաստանի ժողովուրդները՝ հենվելով սոցիալիստական մեծ պետության՝ Սովետական Միության եղբայրական օգնության վրա, հաստատորեն գնում են սոցիալիզմի ուղիով։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի հաղթանակի հետևանքով աշխարհը բաժանվեց երկու հակադիր լագերների։ Մեկը սոցիալիզմի լագերն է, որի գլուխն է կանգնած Սովետական Միությունը, իսկ մյուսը՝ կապիտալիստական լագերն է, որին գլխավորում են նոր պատերազմի անգլո-ամերիկյան հրձիգները։ Այն ժամանակ, երբ սոցիալիզմի լագերի ուժերն աճում են և ամրանում, կապիտալիստական լագերի ուժերը նսայանում են և թուլանում։ Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո այդ երկու լագերների պայքարն է կազմում համաշխարհային պատմության բովանդակությունը, որոշում նրա ընթացքը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան արագացրեց մարդկության առաջխաղացումը դեպի սոցիալիզմ։ Կապիտալիզմի խորտակումը և նրա փոխարինումը սոցիալիզմով՝ պատմականորեն անխուսափելի է։ Եվ ինչքան էլ որ անգլո-ամերիկյան իմպերիալիստները ջղաձգորեն հիգեր անեն, սպառնան մարդկությանը նոր պատերազմով՝ սոցիալիզմի հաղթանակը ամբողջ աշխարհում ապահովված է։ «Իմպերիալիստների ջղաձգական հիգերը, որոնց ոտքի տակ հողը երերում է, չեն փրկի կապիտալիզմը մոտալուտ կորստից։ Մենք ապրում ենք այնպիսի դարում, երբ բոլոր ուղիները տանում են դեպի կոմունիզմ»։[1]

1. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻՑ ՀԵՏՈ

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո Ռուսաստանում իշխանության գլուխ անցավ բուրժուազիան՝ հանձին ժամանակավոր կառավարության, որը չտվեց Ռուսաստանի բանվորներին և գյուղացիներին ոչ ազատություն, ոչ հաշտություն, ոչ հող և ոչ հաց։ Իմպերիալիստական ժամանակավոր կառավարությունը չէր մտածում պատերազմը վերջացնելու

[1] Վ. Մ. Մոլոտով, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի 30-ամյակը, Երևան, 1948 թ., էջ 34։

մասին։ «Մինչդեռ կադետներն ու անգլո-ֆրանսիական կապիտալիստները ուզում էին միայն փոքր ռևոլուցիա կատարել,— գրում է ընկեր Ստալինը,— որպեսզի մասսաների ռևոլուցիոն ոգևորությունն օգտագործեն մեծ իմպերիալիստական պատերազմի նպատակով,— բանվորներն ու զինվորները, ընդհակառակը, ձգտում էին հին ռեժիմի արմատական հեղաբեկման և մեծ ռևոլուցրայր լիակատար հաղթության, որպեսզի, կալվածատերերին տապալելով և իմպերիալիստական բուրժուազիային սանձահարելով, հասնեն պատերազմի վերջացնելուն, ապահովեն արդարացի հաշտությունը»։[1]

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո ֆաբրիկաներն ու գործարանները մնացին կապիտալիստների, իսկ հողը կալվածատերերի ձեռքին։ Ժամանակավոր կառավարությունը դեմ էր 8-ժամյա բանվորական օրվա կիրառմանը, ինչպես և բանվորական վերահսկողության հաստատմանը ձեռնարկություններում։ Կապիտալիստները շարունակում էին հսկայական գերշահույթ ստանալ պատերազմի շնորհիվ։ Պաշտպանելով կալվածատերերի շահերը, ժամանակավոր կառավարությունը ոչ միայն ճընշում էր գյուղացիների պայքարը հողը կալվածատերերից խլելու համար, այլ անգամ գյուղացիներին արգելում էր մշակելու այն հողերը, որոնց կալվածատերերը երեսի վրա էին ձգել։ Ռուսաստանի աշխատավորների առանց այն էլ ծանր տնտեսական դրությունը գնալով ավելի էր ծանրանում։ Ժամանակավոր կառավարությունը ժողովրդի թշնամին էր։ «... Նրան պետք է տապալել,— դրում էր Լենինը,— որովհետև նա օլիգարխիական է, բուրժուական, և ոչ համաժողովրդական, նա չի կարող տալ ոչ խաղաղություն, ոչ հաց և ոչ էլ լիակատար ազատություն»։[2]

Ժամանակավոր կառավարության այդ բուրժուական, հակաժողովրդական քաղաքականությունը խորը բողոք և մեծ դժգոհություն առաջացրեց ժողովրդական մասսաների մեջ, որոնց համար պարզ էր դառնում, որ թե ժամանակավոր կառավարությունը և թե նրա պաշտպաններ մենշևիկներն ու էսերները խաբում են իրենց։ Շուտով մասսաների դժգոհությունն իր արտահայտությունը գտավ ժամանակավոր կառավարության դեմ ուղղված շարժման մեջ, որը գնալով ավելի ծավալվում, խորանում և ռևոլուցիոն լայն շարժման բնույթ էր ստանում։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո բոլշևիկյան պարտիան դուրս գալով ընդհատակից, սկսում է քաղաքական-կազմակերպչական լայն աշխատանք ծավալել մասսաների մեջ։ Բոլշևիկյան պարտիայի առաջնորդ Լենինը դեռ գտնվում էր էմիգրացիայում— Շվեցարիայում։ 1917 թվի մարտի 12 (25)-ին տուրուխանյան աքսորից Պետրոգրադ է գալիս ընկեր Ստալինը և տեղում ղեկավարում բոլշևիկյան պարտիայի աշխատանքները։ Ապրիլի 3 (16)-ին Պետրոգրադ է գալիս Վ. Ի. Լենինը։ Ֆինլանդական կայարանում, իրենց սիրելի առաջնորդին ողջունելու եկած բազմահազար բանվորների, զինվորների և նավաստիների առջև արտասանած իր ճառը Լենինը վերջացնում է «Կեցցե սոցիալիստական ռևոլուցիան» մարտական կոչով։

Բոլշևիկները Լենինի և Ստալինի ղեկավարությամբ Փետրվարյան բուր-

---

1 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 3, էջ 319—320։

2 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր երկու հատորում, 2-րդ հատոր, Երևան, 1948 թ., էջ 13։

ժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո լայն աշխատանք ծավալեցին մասսաներին բացատրելու, որ քանի դեռ իշխանությունը կմնա ժամանակավոր կառավարության ձեռքում՝ չեն լուծվի հաշտության, հողի և աշխատավորական մասսաներին հուզող այլ հարցերը։ Բոլշևիկները բացատրում էին, որ այդ հարցերը լուծելու համար անհրաժեշտ է բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից անցնել սոցիալիստականի։ Լենինը իր հռչակավոր ապրիլյան թեզերում տվեց սոցիալիստական ռևոլուցիայի անցման պարզորոշ գիծը։ 1917 թ. ապրիլին կայացած բոլշևիկյան պարտիայի 7-րդ համառուսական (Ապրիլյան) կոնֆերանսը՝ ելնելով Լենինի թեզերից, որոշեց պայքար ծավալել բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից սոցիալիստականի անցնելու համար։ Դեպքերը Ռուսաստանում շուտով ապացուցեցին, որ բոլշևիկների ցույց տված ուղին միակ ճիշտ ուղին է։ 1917 թ. ապրիլին Ժամանակավոր կառավարությունը հայտարարեց իր դաշնակիցներին՝ Անգլիային, Ֆրանսիային և մյուսներին, որ նա պատերազմը շարունակելու է մինչև վերջ։ Բոլշևիկների կոչով՝ Ժամանակավոր կառավարության այդ իմպերիալիստական քաղաքականության դեմ բողոքի ձայն բարձրացրին Պետրոգրադի աշխատավորները։ Նույն թվի հուլիսին Պետրոգրադում Ժամանակավոր կառավարությունն ու նրա պաշտպաններ մենշևիկներն ու էսերները գազանաբար գնդակոծեցին մայրաքաղաքի աշխատավորների խաղաղ ցույցը, ուղղված Ժամանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականության դեմ։ Ժամանակավոր կոալիցիոն կառավարությունը, ճնշելով բանվորների և զինվորների դեմոնստրացիան, հարձակվեց բոլշևիկյան պարտիայի վրա։ Փակվեցին բոլշևիկյան թերթերը, ձերբակալվեցին բոլշևիկյան պարտիայի մի շարք ականավոր գործիչներ, հրաման արձակվեց մեծ Լենինին ձերբակալելու մասին։ Այսպիսով վերջացավ երկիշխանության ժամանակաշրջանը, ամբողջ իշխանությունը փաստորեն անցավ բուրժուական Ժամանակավոր կառավարության ձեռքը, իսկ Սովետներն իրենց էսերո-մենշևիկյան ղեկավարությամբ դարձան այդ կառավարության կցորդը։ Այս պայմաններում բոլշևիկյան պարտիան փոխում է իր տակտիկան, անցնում ընդհատակ, թաքցնում է Լենինին և սկսում է նախապատրաստել մասսաներին զինված ապստամբության՝ ընդդեմ բուրժուազիայի և Ժամանակավոր կառավարության։

1917 թ. հուլիս—օգոստոսին կայացավ բոլշևիկյան պարտիայի 6-րդ համագումարը, որը պարտիային ուղղություն տվեց դեպի զինված ապստամբությունը, դեպի սոցիալիստական ռևոլուցիայի նախապատրաստումը։ Գեներալ Կորնիլովի կոնտրռևոլուցիոն ելույթը 1917 թ. օգոստոսին և նրա ջախջախումը աշխատավորների կողմից բոլշևիկների ղեկավարությամբ, ակնառու կերպով ցույց տվեց, որ աշխատավորների շահերի և ռևոլուցիայի իսկական պաշտպանը բոլշևիկյան պարտիան է։ Բոլշևիկների ազդեցությունը խիստ աճեց բանվորների, զինվորների և գյուղացիների մեջ՝ Կորնիլովյան կոնտրռևոլուցիոն ելույթից հետո։ «Կորնիլովշչինայի ջախջախումը ցույց տվեց, այնուհետև, որ բոլշևիկյան պարտիան աճել-դարձել է ռևոլուցիայի վճռողական ուժ, որն ընդունակ է ջախջախելու կոնտրռևոլուցիայի բոլոր ոտնձգությունները։ Մեր պարտիան դեռևս կառավարող պարտիա չէր, բայց Կորնիլովշչինայի օրերին նա գործում էր որպես իսկական կառավարող ուժ, ո-

րովհետև նրա ցուցումները բանվորներն ու զինվորները կատարում էին առանց տատանումների»։[1]

* *

Անդրկովկասում ևս ժողովրդական լայն մասսաների դրության մեջ էական փոփոխություններ տեղի չունեցան փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո։ Ընկեր Ստալինը իր «Անդրկովկասի կոնտրռևոլուցիոներները սոցիալիզմի դիմակի տակ» հայտնի աշխատությունում, խոսելով Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո Անդրկովկասում ստեղծված դրության մասին, գրում է. «Փետրվարյան ռևոլուցիան էական փոփոխություններ չմտցրեց երկրամասի աշխատավոր դասակարգերի դրության մեջ։ Զինվորները, գյուղի այդ ամենառևոլուցիոն տարրերը դեռ ռազմաճակատում էին։ Իսկ բանվորները, որոնք ընդհանրապես թույլ են որպես դասակարգ, երկրամասի տնտեսական հետամնացության պատճառով, և որոնք դեռ չեն ամրապնդվել որպես կազմակերպված միավոր, մնում էին ձեռք բերած քաղաքական ազատություններից արբեցած վիճակում, չպատրաստվելով, ըստ երևույթին, ավելի առաջ գնալու։ Ամբողջ իշխանությունը մնում էր ունևոր դասակարգերի ձեռքին։ Վերջինները ամուր կպել էին իշխանությունից ու սպասում էին, հոժարությամբ էսեռա-մենշևիկյան ստրատեգներին թողնելով քնեցնել բանվորներին և գյուղացիներին իմաստուն ճառերով ռուսական ռևոլուցիայի բուրժուական բնույթի, սոցիալիստական հեղաշրջման անիրագործելիության մասին և այլն»։

Ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասը կառավարելու համար ստեղծում է այսպես կոչված Անդրկովկասյան հատուկ կոմիտե, որի մեջ մտան Անդրկովկասի ունևոր դասակարգերի ներկայացուցիչները։ Հենվելով Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների— մենշևիկների, էսերների, դաշնակների և մուսավաթականների վրա, Ժամանակավոր կառավարությունը, հանձին Անդրկովկասյան հատուկ կոմիտեի, Անդրկովկասում ևս վարում էր նույն հակաժողովրդական քաղաքականությունը, ինչ Ռուսաստանում։ Ժողովրդական լայն մասսաների դրությունը Անդրկովկասում ևս գնալով ծանրանում էր պատերազմի հետևանքով։

Փետրվարյան ռևոլուցայից հետո Անդրկովկասում ստեղծված բանվորական, զինվորական և գյուղացիական Սովետները, որոնցում մեծամասնություն կազմում էին մենշևիկները, էսերները և դաշնակները, պաշտպանում էին բուրժուական Ժամանակավոր կառավարությանը և Անդրկովկասյան հատուկ կոմիտեին։ Նույն քաղաքականությունն էին վարում նաև Հայաստանում— Երևանում, Ալեքսանդրոպոլում (այժմ Լենինական), Կարսում և մի քանի ուրիշ վայրերում կազմակերպված Սովետները, որոնցում մենշևիկները, դաշնակները և էսերները մեծամասնություն էին կազմում։

Ժամանակավոր կառավարության և անդրկովկասյան բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակաժողովրդական քաղաքականությունը մի կողմից, Ռուսաստանում աճող ռևոլուցիոն շարժումները մյուս կողմից, ոտքի

---

1 Համկ(բ) Պարտիայի պատմություն, համառոտ դասընթաց, Երևան, 1946 թ., էջ 276։

2 Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4-րդ, էջ 59—60։

հանեցին նաև Անդրկովկասի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին։ 1917 թ. գարնան և ամռան ամիսներին Բաքվում, Թիֆլիսում, Արևմտյան Վրաստանում և Անդրկովկասի մի շարք այլ վայրերում տեղի ունեցան գործադուլներ և գյուղացիական շարժումներ։ Գործադուլներ և ցույցեր տեղի ունեցան նաև Հայաստանում։ Երևանում, 1917 թ. գարնանը գործադուլ հայտարարեցին տպարանների և էլեկտրական ընկերության բանվորները։ Նույն թվի հուլիսին Երևանում ցույց տեղի ունեցավ ժամանակավոր կառավարության դեմ։ Գործադուլներ տեղի ունեցան նաև Ալեքսանդրոպոլում։ Լոռու, Ախտալայի, Սևանի և ուրիշ շրջաններում սկսվում է գյուղացիների պայքարը հողի համար՝ կալվածատերերի և նրանց շահերը պաշտպանող տեղական ու անդրկովկասյան իշխանությունների դեմ։ Գյուղացիներն սկսում են բռնի կերպով խլել կալվածատերերի հողերն ու մշակել։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները եռուն աշխատանք ծավալեցին մասսաների մեջ։ Աշխույժ գործունեություն ծավալեցին նաև Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները։ Փետրվարյան ռևոլուցիայից հետո այդ կազմակերպությունները խտացրին իրենց շարքերը Ալավերդում և Լոռում։ Ուժեղացան և ամրացան բոլշևիկյան կազմակերպությունները Ալեքսանդրոպոլում, Երևանում և Սարիղամիշում։ Վերականգնվեցին Նոր-Բայազետի, Ղափանի, Դիլիջանի, Շամշադինի և մի շարք այլ վայրերի բոլշևիկյան կազմակերպությունները։ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքների ծավալման գործում մեծ դեր խաղացին Կովկասյան ռազմաճակատի զորամասերի բոլշևիկյան կազմակերպությունները։ 1917 թ. մարտին Թիֆլիսում Ստ. Շահումյանի, Ա. Միկոյանի և Ա. Մռավյանի նախաձեռնությամբ սկսեց լույս տեսնել բոլշևիկյան «Բանվորի կռիվ» հայերեն թերթը։ Նույն թվականի մայիսին Բաքվում Ստ. Շահումյանի և Ա. Միկոյանի խմբագրությամբ լույս տեսավ «Սոցիալ-դեմոկրատ» հայերեն թերթը։ Հունիս ամսին Ալեքսանդրոպոլում Բ. Ղարիբջանյանի խմբագրությամբ սկսեցին լույս տեսնել «Նոր կյանք»[1] և «Պրավդա ժիզնի» թերթերը։ Վերոհիշյալ թերթերը մեծ դեր խաղացին աշխատավորներին բոլշևիկյան պարտիայի շուրջը համախմբելու, դաշնակների ու այլ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակաժողովրդական քաղաքականությունը մերկացնելու գործում։ Մեծ աշխատանք տարվեց բոլշևիկյան մամուլը մասսաների մեջ տարածելու ուղղությամբ։ Բոլշևիկների Ալեքսանդրոպոլի Կոմիտեն կազմակերպել էր պարտիական մամուլի առաքման գրասենյակ։ Պարտիական շատ օրգաններ, այդ թվում «Պրավդան» ու «Կավկազսկիյ ռաբոչի»-ն, չնայած եղած արգելքներին, տարածված էին Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում, Սարիղամիշում և Կովկասյան ռազմաճակատի զինվորների մեջ։

1917 թ. հոկտեմբերի 2 (15)-ից մինչև 7 (20)-ը Ստ. Շահումյանի ղեկավարությամբ, Լենինի և Ստալինի ցուցումներով Թիֆլիսում կայացավ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը։ Համագումարում Հայաստանի բոլշևիկների աշխատանքի մասին զեկուցումով հան-

[1] Թեև «Նոր կյանք»-ը սկսում է լույս տեսնել որպես ՌՍԴԻԿ Ալեքսանդրոպոլի կազմակերպության օրգան, բայց թերթում հենց սկզբից գեկավար դեր էին խաղում բոլշևիկները։

դեռ եկավ ընկեր Ա. Միկոյանը։ Հայաստանի բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն տրամադրությունը բնորոշելու համար ընկ. Ա. Միկոյանը, որպես օրինակ, բերում է Ալավերդու բանվորների և Լոռու գյուղացիների պայքարը բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, կալվածատերերի դեմ. «... բանվորները կորցրել են իրենց հավատքը մենշևիկյան համաձայնողական քաղաքականության նկատմամբ»,— հայտարարեց համագումարում ընկեր Միկոյանը,— իսկ «Գյուղացիները կողմնակից են հողի բռնագրավման։ Ալավերդու գործարանի բանվորներն, ինչպես և գյուղացիները գնում են մեր պարտիայի ետևից»։[1] Ղեկավարվելով Լենինի և Ստալինի ցուցումներով, ելնելով բոլշևիկյան պարտիայի 6-րդ համագումարի որոշումներից, համագումարը որոշեց Անդրկովկասում ևս մասսաներին նախապատրաստել զինված ապստամբության՝ սոցիալիստական ռևոլյուցիայի համար։

1917 թ. աշնանը իրադրությունը Ռուսաստանում արմատորեն փոխվեց։ Ժողովրդական լայն մասսաներն անցան բոլշևիկների կողմը։ «Ծավալվեց Սովետների աշխուժացման ու վերակենդանացման շրջանը, Սովետների բոլշևիկացման շրջանը»։[2]

Բոլշևիկները Սովետներում մեծամասնություն շահեցին։ Փոխվեց իրադրությունը նաև Անդրկովկասում և Հայաստանում։ Ուժեղացավ բոլշևիկների ազդեցությունը Հայաստանի բանվորական կենտրոնների՝ Ալավերդու և Ալեքսանդրոպոլի, ինչպես նաև Սարիղամիշի ու Կարսի Սովետներում։

Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների համագումարը վերջանալուց անմիջապես հետո Ստ. Շահումյանը գալիս է Ալեքսանդրոպոլ և կոնկրետ ցուցումներ է տալիս Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների հետագա աշխատանքի համար։ Ստ. Շահումյանի Ալեքսանդրոպոլ գալու մասին այդ ժամանակ Ալեքսանդրոպոլում աշխատող բոլշևիկներից մեկը՝ Բ. Լոգյանը իր հիշողություններում պատմում է. «1917 թ. հոկտեմբերի 7-ին ընկեր Ստ. Շահումյանը Ալեքպոլ եկավ։ Հոկտեմբերի 8-ը հայտարարեց «Բոլշևիկների օր» և այդ օրը... մեծ բազմության առաջ... զեկուցեց Պետերբուրգի դեմոկրատական խորհրդակցության և ընթացիկ մոմենտի մասին։ Զեկուցման առթիվ ոչ մի ծպտուն դուրս չեկավ։ Կադետները, դաշնակները, նացիոնալիստական այլ պարտիաների ներկայացուցիչները, չնայած տեղից անհանգստության նշաններ էին անում, բայց սիրտ չարին ելույթ ունենալ...

Ընկ. Ստ. Շահումյանը վերադասավորեց պարտիական ուժերը զորամասերում, կայազորում, բնակչության մեջ, դեպոյում աշխատելու համար. դիրեկտիվ տվեց աշխատանք ծավալել գյուղացիության մեջ»։[3]

Ստ. Շահումյանի Ալեքսանդրոպոլ գալը, նրա ցուցումները բոլշևիկներին՝ նրանց ապագա աշխատանքի մասին, շուտով տալիս են իրենց արդյունքը։ Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար աշխատողներից մեկը՝ Պ. Արվելաձեն իր հիշողություններում պատմում է, որ Ստ. Շահումյանի Ալեքսանդրոպոլ գալը, նրա ելույթները խիստ օգնեցին բոլշևիկների հաջողություններին Ալեքսանդրոպոլի Սովետում։[4]

---

[1] „Кавказский рабочий", № № 169 և 170, 10 և 11 հոկտեմբերի 1917 թ.։

[2] Համկ(բ) Պարտիայի պատմություն, Համառոտ դասընթաց, Երևան, 1946 թ., էջ 277։

[3] Համկ(բ)ԿԿ կից Մարքսի—Էնգելսի—Լենինի Ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ № 9, պապկա № 1, էջ 3—4։

[4] Նույն արխիվը, ֆ. 30, պ. 1, գործ № 4, էջ 65։

Կենսագործելով Ստ. Շահումյանի ցուցումները, բոլշևիկները Ալեքսանդրոպոլի Սովետի հոկտեմբերի 15 (28)-ի նիստում երկու առաջարկ են մտցնում և անցկացնում։ Առաջին առաջարկն էր վերընտրել Սովետը, որովհետև վերջինս իր մեծամասնությամբ կազմված լինելով էսերներից, դաշնակներից ու մենշևիկներից, այլևս չէր արտահայտում բոլշևիկների կողմն անցած քաղաքի աշխատավորների և զինվորների ռևոլուցիոն տրամադրությունը։ Ջնացած էսերների, դաշնակների և մենշևիկների կատաղի դիմադրության, Սովետը ընդունում է բոլշևիկների առաջարկը և որոշում է կատարել վերընտրություն։ Բոլշևիկների երկրորդ առաջարկն էր մասնակցել Սովետների Համառուսական երկրորդ համագումարին։ Այդ առաջարկը բխում էր պարտիայի դրությից՝ Սովետների Համառուսական երկրորդ համագումար հրավիրելու մասին։ Բոլշևիկների առաջարկով Սովետը որոշում է մասնակցել Սովետների Համառուսական երկրորդ համագումարին։ Այս հարցի քննության ժամանակ կրակոտ ելույթ է ունենում Բ. Ղարիբջանյանը։ Նա բոլշևիկին հատուկ կրքոտությամբ մերկացնում է էսեռների, դաշնակների և մենշևիկների կոնտրռևոլուցիոն քաղաքականությունը։ Որոշելով մասնակցել Սովետների Համառուսական երկրորդ համագումարին, Սովետը ընտրում է մի բոլշևիկ-դելեգատ։ Այնուհետև Սովետը որոշում է ռևոլուցիոն աշխատավորների և զինվորների ճնշման տակ Սովետի նախորդ նիստում իր հրաժարականը ներկայացրած նախագահության փոխարեն Սովետի նախագահի պարտականությունները, մինչև նրա Գործադիր Կոմիտեի վերընտրությունը, դնել բոլշևիկ Պ. Արվելաձեի վրա։ Այսպիսով Ալեքսանդրոպոլի Սովետը արտահայտվում է ամբողջ իշխանությունը Սովետներին հանձնելու օգտին։[1]

1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները հանդիսացան բուրժուազիայի իշխանության դեմ գրոհի նախապատրաստական ժամանակաշրջան։ Մոբիլիզացնելով մասսաներին, բոլշևիկները նախապատրաստում էին նրանց՝ վճռական ռևոլուցիոն մարտերի։ Լենինի և Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ Ռուսաստանի բանվոր դասակարգը, չքավոր գյուղացիության հետ միասին, զինվորների ու նավաստիների աջակցությամբ, 1917 թ. հոկտեմբերի 25 (նոյեմբերի 7)-ին խորտակվեց բուրժուազիայի ու կալվածատերերի տիրապետությունը, տապալեց բուրժուական ժամանակավոր կառավարությունը և հաստատեց սովետական իշխանություն։

Կատարվեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիան։ Հոկտեմբերի 25 (նոյեմբերի 7)-ին բացվեց Սովետների Համառուսական երկրորդ համագումարը, որը հոկտեմբերի 26 (նոյեմբերի 8)-ին պատմական որոշում ընդունեց՝ Ռուսաստանում իշխանությունը Սովետների ձեռքն անցնելու մասին։ Համագումարը հաստատեց Լենինի կողմից առաջարկած դեկրետները հաշտության և հողի մասին։ Այնուհետև համագումարը կազմակերպեց առաջին Սովետական կառավարությունը։

Համագումարը Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ հաստատեց Վլադիմիր Իլիչ Ուլյանովին (Լենինին), իսկ Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսար՝ Լենինի հավատարիմ զինակից Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին։ Ընկեր Ստալինի նշանակումը Ազգությունների Գործերի Ժո-

[1] Ալեքսանդրոպոլի Սովետի այդ նիստի մասին տես „Кавказский рабочий" № 181, 4 հոկտեմբերի 1917 թ.։

ղովրդական Կոմիսարի պոստում՝ բոլշևիկյան պարտիայի մեծ հոգատարության արտահայտությունն էր մեր երկրի ժողովուրդների բախտի նկատմամբ։ Ազգությունների Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը ընկեր Ստալինի գլխավորությամբ մեծ աշխատանք ծավալեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի հաղթանակը Ռուսաստանի ծայրամասերում կազմակերպելու համար։ Շուտով այդ կոմիսարիատի ներսում կազմակերպվեցին առանձին ազգային կոմիսարիատներ՝ Լեհական, Բելոռուսական, Լատիշական և այլն։ Կազմակերպվեց և Հայկական կոմիսարիատ։

1917 թ. նոյեմբերի 2 (15)-ին Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետը Լենինի և Ստալինի ստորագրությամբ հրատարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որն ազդարարում էր սովետական ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները։

Հաղթանակելով սկզբում Ռուսաստանի կենտրոնական մարզերում, սովետական իշխանությունը այնուհետև հաղթական երթով տարածվեց դեպի ծայրամասերը։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիան նոր դարաշրջան բացեց համաշխարհային պատմության մեջ։ Սկսվեց կապիտալիզմի խորտակման և հաղթանակող սոցիալիզմի— կոմունիզմի դարաշրջանը։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիան հիմնովին փոխեց դրությունը Անդրկովկասում։ Խոսելով Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո Անդրկովկասում ստեղծված դրության մասին, ընկեր Ստալինը գրում է. «Հոկտեմբերյան ռևոլուցիան սուր կերպով փոխեց դրությունը։ Նա մեկ շարժումով տակնուվրա արեց բոլոր հարաբերությունները, դնելով իշխանությունը աշխատավոր դասակարգերի ձեռքն անցնելու հարցը։ «Ամբողջ իշխանությունը բանվորներին և գյուղացիներին» կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ, ոտքի հանելով ճնշված մասսաներին։ Եվ երբ Ռուսաստանի հյուսիսում արձակած այդ կանչը սկսեց կենսագործվել այնտեղ, Անդրկովկասի ունևոր դասակարգերը ակնբախ տեսան, որ Հոկտեմբերյան ռևոլուցիան և Սովետական իշխանությունը անխուսափելի մահ են բերում նրանց։ Պայքարը Սովետական իշխանության դեմ, այդ պատճառով էլ, դարձավ նրանց համար կյանքի և մահվան հարց։ Իսկ «սոցիալիստական» էսեռա-մենշևիկյան ինտելիգենցիան, որն արդեն ճաշակել էր իշխանության իմացության ծառից և դրված է այժմ այդ իշխանությունը կորցնելու հեռանկարի առաջ, ավտոմատորեն դաշինքի մեջ մտավ ունևոր դասակարգերի հետ։

Այսպես ստեղծվեց հակասովետական կոալիցիան Անդրկովկասում»։[1]

Անդրկովկասի և Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան ընդունեցին մեծ խանդավառությամբ։ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ալավերդում, Ալեքսանդրապոլում և Անդրկովկասի մյուս քաղաքներում, ինչպես և գյուղական վայրերում, տեղի ունեցան բազմաթիվ միտինգներ ու ժողովներ, որտեղ բանվորներն ու գյուղացիները ողջունում էին Հոկտեմբերյան ռևոլուցիան և խոսք տալիս պայքարել նրա հաղթանակի համար նաև Անդրկովկասում։

Անդրկովկասում՝ սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում ավանգարդային դերը պատկանում էր Բաքվի հերոսական պրոլետարիատին։ Բոլշևիկների ղեկավարությամբ Բաքվի Սովետը 1917 թ. նոյեմ-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 60։

բերի 2 (15)-ին որոշում է ընդունում իշխանությունը Սովետների ձեռքը անցնելու մասին։ Թիֆլիսի Արսենալի ռայոնի բանվորները նոյեմբերին իրենց բազմամարդ ժողովում ողջունում են Հոկտեմբերյան ռևոլուցիան, խոսք տալիս պաշտպանել այն և պահանջում են, որ սովետական իշխանություն հաստատվի և Անդրկովկասում։ Նման որոշում են հանում Անդրկովկասյան երկաթուղու գլխավոր արհեստանոցների և Թիֆլիսի ուրիշ ձեռնարկությունների բանվորները։ 1917 թ. նոյեմբերի վերջերին Երևանի աշխատավորները քաղաքի զորամասերի հետ միասին բոլշևիկների ղեկավարությամբ ցույց կազմակերպեցին, պահանջելով իշխանությունը հանձնել Սովետներին։ 1918 թ. հունվարին Հաղպատում կայացած բոլշևիկների և անպարտիական աշխատավորների ժողովը, լսելով զեկուցում ընթացիկ մոմենտի մասին, որոշում է ճանաչել Սովետական Ռուսաստանի կառավարությունը։ Որոշման մեջ ասվում էր. «Հանուն սոցիալիստական ռևոլուցիայի շահերի՝ իշխանությունն ամբողջովին պիտի տրվի Սովետներին, որոնք անողոք պայքար կտանեն կոնտրռևոլուցիոն տարրերի, բեկերի, աղալարների, խաների և կալվածատերերի դեմ։ Մենք խոսք ենք տալիս այս պայքարում Սովետներին ցույց տալ վճռական օգնություն»։[1]

Դեկտեմբերին Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորները և աշխատավորները իրենց բազմամարդ միտինգում որոշում են ընդունում ճանաչել միմիայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը, որը միայն կարող է տալ ազատություն, հող և հաշտություն։ Միտինգի կողմից ընդունված բանաձևում ասվում էր. «Միակ իշխանությունը, որը ապահովում է մեզ կայուն խաղաղություն, ամբողջ հողը և լիակատար ազատություն, դա՝ Սովետների իշխանությունն է, հանձին բանվորա-գյուղացիական կառավարության, որը ներկայումս կյանքում հետևողականորեն, առանց տատանումների կիրառում է ռևոլուցիոն քաղաքականություն»։ Այնուհետև բանաձևում ասվում էր, որ «Կովկասում ուրիշ իշխանություն չի կարող կազմակերպվել, բացի սովետականից»։[2] Նման որոշումներ աշխատավորներն ընդունում են Սարիղամիշում, Ջալալ-Օղլում (այժմ՝ Ստեփանավան) և Հայաստանի այլ վայրերում։ Ջալալ-Օղլու կայազորի զինվորների և բնակիչների միտինգը, կայացած 1917 թ. նոյեմբերին, ընդունում է հետևյալ բանաձևը. «Ամբողջ իշխանությունը պիտի անցնի բանվորների, գյուղացիների և զինվորների Սովետների ձեռքը, որպես ժողովրդական շահերի իսկական պաշտպանների։ Ոչ մի հավատք կոնտրռևոլուցիոն բուրժուազիայի և համաձայնողականների նկատմամբ։ Մենք մեր ողջույնն ենք հղում Պետրոգրադի կայազորին և պրոլետարիատին, որոնք կանգնած են ազատության և ռևոլուցիայի պաշտպանության պոստում»։[3] Սարիղամիշի կայազորի զինվորների և տեղական աշխատավորների միտինգը, կայացած 1918 թ. հունվարին, ընդունում է հետևյալ բանաձևը. «Քննելով ընդհանուր դրությունը Ռուսաստանում և մասնավորապես Կովկասում, մենք որոշեցինք չենթարկվել Անդրկովկասյան կոմիսարիատի կոնտրռևոլուցիոն կարգադրություններին»։[4]

Նույն տեղում մի քանի օր հետո կայացած մի երկրորդ միտինգի կողմից

[1] „Кавказский рабочий", № 15, 21 հունվարի 1918 թ.։
[2] „Кавказский рабочий", № 212, 30 նոյեմբերի 1917 թ.։
[3] „Кавказский рабочий", № 202, 17 նոյեմբերի 1917 թ.։
[4] „Кавказский рабочий", № 14, 20 հունվարի 1918 թ.։

ընդունված բանաձևում ասվում էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը ոչ միայն խոսքով, այլ գործով ցույց տվեց, որ նա ժողովրդին ցանկանում է տալ հաշտություն, գյուղացիներին հող և որ «...Մենք, Սարիղամիշի կայազորի զինվորներս, ջերմորեն ողջունում ենք Ժողովրդական Կոմիսարների Սովետին ու մեզ հայտարարում ենք սովետական ռևոլուցիոն բանակ, որը պատրաստ է բանվորա-գյուղացիական կառավարության առաջին իսկ կոչով հանդես գալ պաշտպանելու համար նրան և ռուսական ռևոլուցիան»։[1]

Մեծ աշխատանք ծավալեցին բոլշևիկները նաև Կովկասյան ռազմաճակատի զինվորների մեջ։ Չնայած էսերների, մենշևիկների և դաշնակների բոլոր փորձերին՝ իրենց ազդեցության տակ պահելու զինվորներին, վերջիններս անցան բոլշևիկների կողմը։ 1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսում կայացավ Կովկասյան բանակի երկրորդ երկրային համագումարը, որն իր մեծամասնությամբ բոլշևիկյան էր։ Համագումարը որոշեց ճանաչել միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը։ Զինվորների բոլշևիկյան տրամադրությունն իր ազդեցությունն էր թողնում ճակատամերձ շրջանների աշխատավորների վրա։ Սարիղամիշում կազմակերպված ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն տեղական աշխատավորների օգնությամբ 1918 թ. հունվարին Սարիղամիշում հայտարարում է սովետական իշխանություն։ Հունվարին Սարիղամիշից հայտնում էին, որ «իշխանությունը բոլշևիկների ձեռքին է։ Ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն ձերբակալել է հայկական զինվորական (այսինքն ազգայնական-դաշնակցական— Հ. Է.) վարչության անդամներին...»։[2]

1917 թ. դեկտեմբերին Սովետական Ռուսաստանի կառավարությունը, լսելով ընկեր Ստալինի զեկուցումը Կովկասի դրության մասին, որոշում է Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի ժամանակավոր արտակարգ կոմիսար՝ մինչև Կովկասում սովետական իշխանության կազմակերպվելը։ Ղեկավարվելով բոլշևիկյան պարտիայի մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի ցուցումներով, Ստ. Շահումյանը գլխավորեց Կովկասի բանվորների ու գյուղացիների պայքարը սովետական իշխանության հաղթանակի համար։ Նա դիմեց Կովկասի բանվորներին ու գյուղացիներին, կոչ անելով նրանց՝ տապալել կոնտրռևոլուցիոն իշխանությունները և հաստատել Կովկասում սովետական իշխանություն։ «Սովետական իշխանությունը Կովկասում պետք է ստեղծել անհապաղ,— գրում էր Շահումյանը այդ կոչում։— Ռուսաստանում ոչ մի տեղ ռևոլուցիայի գործն այնպիսի վտանգի մեջ չի գտնվում ներկայումս, ինչպես մեզ մոտ՝ Կովկասում։ Հյուսիսային Կովկասում ծայր առած կոնտրռևոլուցիայից անմիջապես հետո բացահայտորեն գլուխ է բարձրացրել կոնտրռևոլուցիան Անդրկովկասում...

Կովկասը կանգնած է անդունդի եզրին։ Փրկեցեք նրան։ Ստեղծեցեք այստեղ ինտերնացիոնալ Բանվորա-Գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների և Ժողովրդական Կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի կոնտրռևոլուցիային և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությունը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»։[3]

Այսպիսով, ինչպես գրում է ընկեր Ստալինը, «Հյուսիսից եկող սովե-

[1] „Кавказский рабочий", № 26, 4 փետրվարի 1918 թ։
[2] «Մշակ», № 16, 24 հունվարի 1918 թ։
[3] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 529-532։

տական ռևոլուցիայի ալիքը համարձակ ներս էր խուժում անդրկովկասյան կոալիցիայի թագավորությունը, սպառնալով նրա գոյությանը»։[1] 1917 թ. վերջերին Անդրկովկասում ստեղծվել էր նպաստավոր ռևոլուցիոն սիտուացիա սովետական կարգերի հաստատման համար։ Սակայն Թիֆլիսի բոլշևիկների մի խմբի բռնած օպորտունիստական գիրքը կանխորոշեց սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարի ձգձգումը Անդրկովկասում։ Այդ մասին „История гражданской войны в СССР" աշխատության երկրորդ հատորում կարդում ենք. «Միայն Թիֆլիսի բոլշևիկների մի խումբ բռնեց սխալ օպորտունիստական դիրք, քարոզելով իշխանությունը «խաղաղ» ճանապարհով գրավելու և մենշևիկների հետ համաձայնվելու հնարավորությունը։

Օպորտունիստների խմբի հենց այդ դավաճանական գիրքը կանխորոշեց Սովետների համար մղվող պայքարի ձգձգումը Անդրկովկասի բոլոր վճռական կենտրոններում, բացի Բաքվից»։[2]

Նույն հարցի մասին ընկ. Լ. Բերիան իր «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» աշխատությունում գրում է, որ այդ խումբը, հակառակ Լենինի և Ստալինի ցուցումներին, վճռաբար հրաժարվեց «... Վրաստանում և Անդրկովկասում իշխանության համար զինված պայքար նախապատրաստելուց և անցկացնելուց, փաստորեն մենշևիկներին հանձնեց Թիֆլիսի զինանոցը, հրաժարվեց զինվորների մեջ ագիտացիա մղել սովետական իշխանության համար և օգտագործել Կովկասյան ճակատի ռևոլուցիոն զինվորներին՝ պայքարելու Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն պարտիաների (մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների) բլոկի տապալման համար, պարտիաներ, որոնք փետրվարյան ռևոլուցիայից հետո գրավել էին իշխանությունը։ Նրանք (այդ խմբի անդամները—Հ. Է.) Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո լոզունգ ընդունեցին՝ իշխանության խաղաղ անցումն Սովետներին և պայքար՝ մենշևիկների ու էսեռների կողմից սովետական իշխանությունը ճանաչելու համար»։[3]

Հոկտեմբերյան ռևոլուցիան ցարական Ռուսաստանի ժողովուրդներին ազատագրեց դարավոր ճնշումից։ Հավատարիմ իր վարած ազատարար քաղաքականության ճնշված ժողովուրդների նկատմամբ, Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11-ին) ընդունեց հայ ժողովրդի համար խոշոր նշանակություն ունեցող դեկրետը Արևմտյան Հայաստանի մասին։ Սովետների Համառուսական երրորդ համագումարը, որ տեղի ունեցավ 1918 թ. հունվարին, հաստատեց այն։ Դեկրետը, որ ստորագրված էր Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կողմից, արևմտահայերին տալիս էր ազգային ինքնորոշման լրիվ իրավունք՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախություն։ Այդ դեկրետի առթիվ գրած իր «Թուրքահայաստանի» մասին» հոդվածում ընկեր Ստալինը գրում էր. «Այժմ պարզ է ամենքի համար, որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, իսկ առանձնապես հայ ժողովրդի բախտը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլուցիայի բախտի հետ»։[4]

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 67։
[2] „История гражданской войны в СССР", том II, Москва, 1943 г., стр. 158.
[3] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, Երևան, 1945 թ., էջ 225։
[4] Ի. Վ. Ստալին, Երկեր, 4-րդ հատոր, էջ 31։

Դեկրետը ազդարարում էր.

«Ժողովրդական Կոմիսարների Սովետը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված, «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախությունը։

Ժողովրդական Կոմիսարների Սովետը գտնում է, որ այդ իրավունքի իրագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմանով, որոնք բացարձակորեն անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ ռեֆերենդումի համար։

Ժողովրդական Կոմիսարների Սովետը այդպիսի երաշխիքներ է համարում՝

1. «Թուրքահայաստանի» սահմաններից զորքի հեռացումը և անմիջապես հայկական ժողովրդական միլիցիայի կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձի և գույքի ապահովության համար։

2. Փախստական հայերի, ինչպես և զանազան երկրներում ցրված հայ էմիգրանտների անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները։

3. Պատերազմի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից բռնությամբ Թուրքիայի խորքերը քշված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները, որի վրա Ժողովրդական Կոմիսարների Սովետը պիտի պնդի թուրք իշխանությունների հետ հաշտության բանակցություններ վարելիս։

4. «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական Վարչության կազմումը, որպես Հայ Ժողովրդի Դեպուտատների Սովետ, ընտրված դեմոկրատական սկզբունքներով։

Կովկասյան գործերի Արտակարգ Կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է «Թուրքահայաստանի» բնակչությանը ցույց տալ ամեն տեսակ աջակցություն 2-րդ և 4-րդ կետերի իրականացման գործում, ինչպես և ձեռնարկել խառն հանձնաժողով կազմակերպելուն՝ որոշելու համար այն ժամանակամիջոցն ու եղանակը, որով դուրս պիտի հանվեն զորքերը «Թուրքահայաստանի» սահմաններից (կետ 1-ին)։

Մանրություն.— «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի կողմից դեմոկրատական ձևով ընտրված ներկայացուցիչների կողմից՝ համաձայնության գալով հարակից և վիճելի շրջանների (մահմեդական և ուրիշ) դեմոկրատական ձևով ընտրված ներկայացուցիչների հետ՝ Կովկասի Գործերի Արտակարգ Ժամանակավոր Կոմիսարի հետ միասին»։[1]

Հայ աշխատավորությունը մեծ գոհունակությամբ ընդունեց այդ դեկրետը, որը ռեալ պայմաններ էր ստեղծում արևմտահայերի ազատագրման համար Թուրքիայի լծից։ Սակայն, մի կողմից գերմանա-թուրքական իմպերիալիստների ավազակային հարձակումը Սովետական Ռուսաստանի վրա և մյուս կողմից Անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն ուժերի դավաճանական քաղաքականությունը հնարավորություն չտվին իրագործելու Սովետական Ռուսաստանի դեկրետը՝ Արևմտյան Հայաստանի մասին։

[1] Декреты Октябрьской революции, Москва, 1933 г., стр. 393—394.

Ատելությամբ լցված դեպի Ռուսաստանում հաղթանակած սոցիալիստական ռևոլուցիան և բռնված Անդրկովկասում ևս սովետական իշխանության հաղթանակի սարսափով, հակասովետական կոալիցիան զինված պայքարի մեջ մտավ Սովետական Ռուսաստանի դեմ և դաժան ռեպրեսիաների դիմեց՝ ճնշելու Անդրկովկասի բանվորների և գյուղացիների պայքարը՝ սովետական իշխանության հաստատման համար։ Նա կանգնեց Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու հակաժողովրդական ուղու վրա և Անդրկովկասը կառավարելու համար ստեղծեց իր կոնտրռևոլուցիոն մարմինները՝ 1917 թ. նոյեմբերի 11 (24)-ին այսպես կոչված Անդրկովկասյան Կոմիսարիատը և 1918 թ. փետրվարի 10 (23)-ին՝ Անդրկովկասյան սեյմը։

Ընկեր Ստալինը այդ կոնտրռևոլուցիոն օրգանների ստեղծման նպատակի մասին գրում է. «Դասակարգերի կոալիցիայի համար ազգային խմբերի ներսում կազմակերպվում են «ազգային խորհուրդներ»— վրացական, թաթարական, հայկական»։ «Անդրկովկասի բոլոր գլխավոր ազգությունների ունևոր խավերի կոալիցիայի համար ստեղծվում է Անդրկովկասյան կոմիսարիատը», իսկ «Երկրամասի «ամբողջ բնակչությունը» Սովետական իշխանության դեմ մղելիք պայքարում միավորելու համար կազմակերպվում է այսպես կոչված «Անդրկովկասյան սեյմը», որ կազմված է Սահմանադիր ժողովի Անդրկովկասից ընտրված էսեռա-մենշևիկա-դաշնակա-խանական անդամներից»,[1] որ «... հանձին Անդրկովկասյան կոմիսարիատի և նրա «սեյմական-ազգային» հավելումների մենք գործ ունենք Անդրկովկասի բանվորների և գյուղացիների դեմ ուղղված ամենաշարանենգ կոնտրռևոլուցիոն բլոկի հետ»։[2]

Անդրկովկասյան կոմիսարիատը և սեյմը զենքի ուժով ճնշեցին բանվորների և գյուղացիների ռևոլուցիան ելույթը, կատարեցին բազմաթիվ գրնդակահարություններ և բանտարկություններ, փակեցին բոլշևիկյան թերթերը։ Հակասովետական կոալիցիայի գեկավարների կարդադրությամբ 1918 թ. հունվարին Շամխոր կայարանում կատարվեց հրեշավոր ոճրագործություն— գնդակահարվեցին Կովկասյան ռազմաճակատից կոնտրռևոլուցիոն գեներալ Կալեդինի դեմ պայքարելու համար Հյուսիսային Կովկաս գնացող հաղարավոր ռևոլուցիոն ռուս զինվորներ։ Հակասովետական կոալիցիայի այդ ոճրագործությունը մեծ զայրույթ ու բողոք առաջացրեց Անդրկովկասի աշխատավորների մեջ։ «Մեծագույն ոճրագործություն է կատարվել ռուս բանակի դեմ։ Դա դավաճանություն է Անդրկովկասի ամբողջ գյուղացիության և մեր երկրամասի ամբողջ ռևոլուցիոն շարժման դեմ»,[3]— գրում է Ստ. Շահումյանը Շամխոր կայարանում տեղի ունեցած դեպքերի առթիվ։

Փետրվարին դաշնակները փորձում են մի երկրորդ Շամխոր կազմակերպել Ալեքսանդրոպոլ կայարանի շրջակայքում Իրանից Հյուսիսային Կովկաս վերադարձող ռուսական 66-րդ դիվիզիայի նկատմամբ։ Սակայն շնորհիվ Ալեքսանդրոպոլի բոլշևիկների ձեռք առած միջոցների, այդ ոճրագործությունը կանխվում է։ Բոլշևիկների հանձնարարությամբ Բ. Ղարիբջանյանը գնում է Բայանդուր կայարանը և զգուշացնում զինվորներին դավադրության մասին։ Զինվորներն իրենց շնորհակալությունն են հայտնում և Ալեքսանդրոպոլից

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 60—61։
[2] Նույն տեղում, էջ 73-74։
[3] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 516։

հեռանալիս տեղի բոլշևիկյան կազմակերպությանը տալիս են մեկ գնդացիր, 50 հրացան և 40 ձեռքի նռնակ։[1]

1918 թ. փետրվարին դարձյալ հակասովետական կոալիցիայի ղեկավարների կարգադրությամբ, Թիֆլիսում, Ալեքսանդրյան այգում, գազանաբար գնդակոծվեց աշխատավորների խաղաղ միտինգը, որը բոլշևիկների ղեկավարությամբ հավաքվել էր իր բողոքը հայտնելու անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն պարտիաների վարած հակաժողովրդական քաղաքականության դեմ։

Վարելով Սովետական Ռուսաստանի հանդեպ անջատողական քաղաքականություն, հակասովետական կոալիցիան 1918 թ. մարտին ավանտյուրիստական փորձ կատարեց անջատ հաշտություն կնքել Թուրքիայի հետ Տրապիզոնում։ Այդ փորձը, սակայն, հաջողություն չունեցավ։

Բաքվի հերոսական պրոլետարիատը, աննկուն բոլշևիկներ Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Ի. Ֆիալետովի և Ա. Միկոյանի անմիջական ղեկավարությամբ, ջախջախելով կոնտրռևոլուցիոն ուժերը, 1918 թ. ապրիլին Բաքվում հաստատեց սովետական իշխանություն (Բաքվի կոմունան)։ Լենինը և ընկեր Ստալինը բարձր գնահատեցին այդ պայքարը և ուշադրությամբ հետևում էին նրան, ղեկավարում այն։ Ընկեր Ստալինը սովետական իշխանության հաղթանակի համար Բաքվի պրոլետարիատի մղած պայքարի մասին գրում է. «... Ռևոլուցիոն պրոլետարական Բաքուն, որը Հոկտեմբերյան ռևոլուցիայի առաջին իսկ օրերից ճանաչել է Սովետական իշխանությունը և անդուլ պայքար է մղում Անդրկովկասյան կոմիսարիատի դեմ, չէր թողնում, որ անդրկովկասյան պրոլետարիատը քնի, նրա համար վարակիչ օրինակ և սոցիալիզմի ուղին լուսավորող կենդանի փարոս է ծառայում»[2]

Բաքվում սովետական իշխանություն հաստատելուց հետո Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ հերոսական պայքար ծավալեց սովետական իշխանության հաղթանակի համար նաև ամբողջ Անդրկովկասում։ «Բաքվում սովետական իշխանություն հաստատելու օրից ի վեր,— գրում էր Ստ. Շահումյանը,— մենք միշտ ասել ենք, որ Բաքուն սովետական իշխանության բազան է, որ այստեղ ամրանալով՝ մենք պետք է մտածենք այն մասին, որպեսզի եղբայրական ձեռք մեկնենք Անդրկովկասի վրացի, հայ և մուսուլմանական գյուղացիությանը և նրանց հետ միասին թոթափենք բեգերի, խաների լուծը և սովետական իշխանություն ստեղծենք Անդրկովկասում»[3]

1918 թ. հունվարին Կովկասյան ռազմաճակատի թուրքական հրամանատարությունը խախտեց իր և Անդրկովկասյան կոմիսարիատի միջև կնքված զինադադարը և թուրքական զորքերն անցան հարձակման։ Առաջանալով դեպի Անդրկովկաս, նրանք վերցրին Երզնկան, Մամախաթունը, Էրզրումը, իսկ ապրիլին մտան Անդրկովկաս։ Անդրկովկասյան հակասովետական կոալիցիան չէր մտածում պաշտպանել Անդրկովկասը օտարերկրյա զավթիչներից, որոնց օգնությամբ նա կամենում էր ճնշել ռևոլուցիոն շարժումը երկրամասում։ Ապրիլին թուրքական զորքերը վերցրին Բաթումը և Կարսը։ Գերմանա-թուրքական զավթիչների օգնությամբ ռևոլուցիոն շարժումը ճնշելու և սովե-

[1] Համկ(բ)Պ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի Ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 9, պապկա 1, էջ 3—4։

[2] Նույն տեղը, էջ 68—69։

[3] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., հ. 2, էջ 613։

ГА-4091

տական իշխանության հաստատումը Անդրկովկասում կանխելու նպատակով սեյմը 1918 թ. ապրիլի 22-ին Անդրկովկասը հայտարարում է «անկախ»։ Այդ «անկախության» մասին ընկեր Ստալինը գրում է. «Անդրկովկասի դրությունն ավելի ու ավելի սպառնալից է դառնում։ Սեյմի կողմից Անդրկովկասի անկախության հայտարարումը (22 ապրիլի), որը պետք է արձակեր Թիֆլիսի «կառավարության» ձեռքերը, փաստորեն նրան դցեց միջազգային դիշատիչների ծուղակը։ Ինչով կվերջանան այսպես կոչված «հաշտության բանակցությունները» Բաթումում, ցույց կտա ամենամոտիկ ապագան։ Մի բան անկասկած է. Թիֆլիսի մենշևիկների ու նրանց կառավարության անկախությունը ռուսաստանյան ռևոլուցիայից՝ անխուսափելիորեն փոխարկվելու է նրանց ստրկական կախման թուրք-գերմանական «քաղաքակիրթ» գիշատիչներից»։[1] Շուտով իրականացան ընկեր Ստալինի խոսքերը։

Անդրկովկասի ժողովուրդները, որոնց թվում և հայ ժողովուրդը, դեմ էին այդ հակաժողովրդական քայլին, որովհետև նրանք գիտակցում էին, որ անջատումը Սովետական Ռուսաստանից նրանց համար կորստաբեր հետևանքներ է ունենալու, որ նրանք զրկվելով Սովետական Ռուսաստանի օգնությունից, պիտի ընկնեն իմպերիալիստական պետությունների լծի տակ։ Անդրկովկասի ժողովուրդները իրենց բուռն բողոքը հայտնեցին հակասովետական կոալիցիայի այդ քայլի դեմ և Բաքվում սովետական իշխանության գլխավորությամբ ուժեղացրին իրենց պայքարը օտարերկրյա դավթիչների և Անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն ուժերի դեմ՝ հանուն սովետական իշխանության հաղթանակի ամբողջ Անդրկովկասում։ Բաքվի Սովետը և Բաքվի գավառի մուսուլման գյուղացիների համագումարը 1918 թ. մայիսի 29-ին իրենց միացյալ նիստում՝ լսելով ընկեր Ստ. Շահումյանի զեկուցումը «Սեյմի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին», որոշում են իրենց բողոքը հայտնել Անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն պարտիաների այդ քայլի դեմ, պարտիաներ, «... որոնք հանդգնեցին Անդրկովկասի անկախություն հռչակել, և ներկայումս հանձին իրենց ներկայացուցիչների Բաթումում բանակցություններ են վարում Բաքվի իշխանության դեմ գերմանա-թուրքական զորքեր ուղարկելու մասին»։ Այնուհետև բանձևում ասվում էր. «... ամբողջ Անդրկովկասի բանվորներս ու գյուղացիներս ոչ մի դեպքում չենք հաշտվի Անդրկովկասը ռևոլուցիոն Ռուսաստանից անջատելու հետ, և ղենքը ձեռքներիս կկռվենք թուրք-գերմանական բանդաների դեմ և նրանց դաշնակիցների— դավաճաններ Չխենկելիի, Չիաթխանով-Խոյսկիների և նմանների դեմ»։[2]

Խոսելով Անդրկովկասի բանվորների և գյուղացիների պայքարի մասին, Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու հակասովետական կոալիցիայի փորձի մասին, ընկեր Ստալինը գրում է. «Ամբողջ Հայաստանը բողոքում է Թիֆլիսի ինքնակոչ «կառավարության» ուղուրպատորության դեմ, պահանջելով սեյմական դեպուտատների հեռացումը։ Իսկ մուսուլմանականության կենտրոնը, Բաքուն, Սովետական իշխանության միջնաբերդն Անդրկովկասում, իր շուրջը համախմբելով ամբողջ Արևելյան Անդրկովկասը, Լենքորանից ու Կուբայից մինչև Ելիզավետպոլ, ղենքը ձեռքին հաստատում է Անդրկովկասի ժողովուրդների իրավունքները, որոնք բոլոր ուժերով աշխա-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 107։
[2] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 625—626։

տում են պահպանել կապը Սովետական Ռուսաստանի հետ։ Մենք արդեն չենք խոսում հերոսական Աբխազիայի մասին, Սև ծովի ափին, որը միահամուռ կերպով ապստամբել է Թիֆլիսի «կառավարության» սև բանդաների դեմ և զենքը ձեռքին նրանց դեմ պաշտպանում է Սուխումը... Անդրկովկասյան բնակչությունը դեմ է Թիֆլիսի «կառավարությանը»։ Անդրկովկասյան բնակչությունը դեմ է Ռուսաստանից անջատվելուն...»։[1]

Անդրկովկասի «անկախ» հայտարարումը թուրք-գերմանական զավթիչներն օգտագործեցին իրենց արշավը Անդրկովկասի վրա շարունակելու համար։ Նրանք սկսեցին կիրառել իրենց նվաճողական քաղաքականությունը, հայտարարելով, որ Անդրկովկասը անջատվել է Սովետական Ռուսաստանից և իրեն հայտարարել է «անկախ»։

1918. թ. մայիսին թուրքերը վերսկսեցին հարձակումը Արևելյան Հայաստանի վրա։ Մայիսի 15-ին նրանք ռմբակոծումից հետո գրավեցին Ալեքսանդրոպոլը և վերջինս հենակետ դարձնելով, մի կողմից շարժվեցին դեպի Երևան, մյուս կողմից՝ դեպի Ղարաքիլիսա (այժմ՝ Կիրովական), որը գրավելով կարող էին Ղազախի վրայով անցնել Ադրբեջան՝ Բաքվում Սովետական իշխանության վրա հարձակվելու համար, ինչպես և սպառնալ Թիֆլիսին։

Հայ ժողովուրդը իր համար ստեղծված այս բացառիկ ծանր օրերին, հակառակ կոնտրռևոլուցիոն դաշնակների քաղաքականության, որոնք դեմ էին թուրքական արշավին դիմադրելուն, մի շարք վայրերում հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրքական զավթիչներին։ Երևանի շրջակա գյուղերի բնակչությունը Սարդարաբադի տակ պարտության մատնեց Երևանի վրա արշավող թուրքական զորամասին և ստիպեց նրան հետ նահանջել դեպի Ալեքսանդրոպոլ։ Նույն օրերին Ղարաքիլիսայի տակ Ղազախ—Դիլիջանի և Փամբակի գյուղերի գյուղացիությունը երեք օր կանգնեցրեց թուրքական բանակի առաջացումը։

Ինչպես ասացինք, այդ մարտերում կռվողը ինքը ժողովուրդն էր՝ հայ գյուղացին։ «Հայերի»՝ թուրքական զորքերի դեմ մղած պայքարի մեջ,— կարդում ենք մենք մի թղթակցությունում այդ կռվի մասին,— Ղարաքիլիսայի կռիվը բռնում է բացառիկ տեղ իր խիզախությամբ և հերոսական ոգով։

Հայ-թուրքական կռիվների միջոցին ոչ մի տեղ հայկական զորքերն այնպիսի խիզախ, անձնուրաց դիմադրություն չցուցաբերեցին, ինչպես այդ արին Ղարաքիլիսայի մոտ հայ գյուղացիները, այդ լեռնական, երկրագործ և հովիվ մարդիկ։

Ականատեսների վկայությամբ, նրանց անվարժ, անհավասար քայլող խմբերը գնում էին իրենց պատիվը, տունը, ընտանիքը պաշտպանելու և մեռնելու պարզ գիտակցությամբ»։[2]

Համաձայն թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշայի հայտարարության, Ղարաքիլիսայի տակ «... շտապ կերպով հավաքված և նույնիսկ գումարտակների և գնդերի չմիավորված 7000 հայերի դեմ, որոնք ունեին 10 թնդանոթ և 20 գնդացիր, թուրքերն ունեին 10.000 ընտիր զորք, 70 թնդանոթ, և 40 գնդացիր։ Եվ չնայած դրան՝ վերջնական հաջողությունը թուրքերը ձեռք բերին խոշոր զոհերի գնով»։[3]

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 108—109։
[2] «Մշակ», № 108, 9 հունիսի 1918 թ.։
[3] „Кавказское слово", № 119, 12 հունիսի 1918 թ.

Այդ մարտերը ցույց տվին, որ հայ ժողովուրդը Անդրկովկասի մյուս ժողովուրդների պես պատրաստ է գիմադրելու դերմանա-թուրքական զավթիչներին։ Սակայն, շնորհիվ Անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն պարտիաների դավաճանական քաղաքականության, օտարերկրյա օկուպանտներին հաջողվեց կիրառել իրենց զավթողական պլանները Անդրկովկասի նկատմամբ։ Անդրկովկասը կարող էր պաշտպանել և նրա ժողովուրդների պայքարը ինտերվենտների դեմ գլխավորել միայն Սովետական իշխանությունը։

Անդրկովկաս ներխուժելուց հետո թուրքական զորքերը շարունակեցին իրենց հին ջարդարար քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ։ Թուրքական օկուպանտները ամենաբարբարոս ձևերով կոտորում էին հայ բնակչությանը և հափշտակում նրա գույքը։ Այդպես եղավ Կարսի մարզում, Ալեքսանդրոպոլի գավառում։ Նույնը կրկնվեց և Փամբակում։

1918 թ. վերջերին Թիֆլիսում մի հատուկ բյուրո էր կազմակերպվել, որն իր առջև խնդիր էր դրել պարզել հայերի կրած թե մարդկային և թե նյութական վնասները առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին։ Այդ բյուրոյի գլուխն էր անցել հայ անվանի բանաստեղծ Հովհաննես Թումանյանը։ Բյուրոյի նյութերում կան փաստաթղթեր, որոնք լուսաբանում են Ղարաքիլիսայում և Փամբակի մյուս գյուղերում պատահած դեպքերը։ Փաստաթղթերից մեկում այդ դեպքերի մասին կարդում ենք.

«Թուրքական զորքը ներս է խուժել Փամբակի շրջանը 1918 թ. մայիսի 20-ին։ Այդ զորքը Ջավիդ բեյի 11-րդ դիվիզիան էր... որ թե այս և թե հետո եկած զորամասերի կատարած սպանությունները, բռնությունները չեն կրել տարերային բնույթ, չեն եղել զինվորների սանձարձակության հետևանք, այլ նրանք արդյունք են թուրք կառավարիչների կանխորոշած ծրագրի՝ սա կասկածից դուրս է։ Պարզ է միանգամայն, որ հրահանգված թուրք հրամանատարությունը նպատակ է ունեցել ուժասպառ անել բարեկամ չհամարվող հայ ազգաբնակությունը՝ թե՛ ֆիզիկապես, թե՛ տնտեսապես... Կոտորածները ոչ թե անկարգ, պատահական բնույթ չեն կրել, այլ եղել են ծրագրված և կազմակերպված ու տևել են պաշտոնապես երեք օր։ Ղարաքիլիսայում թե՛ բռնությամբ և թե՛ զանազան խորամանկ միջոցներով հարյուրավոր մարդկանցից բաղկացած խմբեր են հավաքել և գյուղից դուրս հանելով գնդակահարել կամ սվինահարել։ Ղարաքիլիսայում սպանվել են բոլոր հայ սպաներն ու զինվորները, որոնք պարտությունից հետո կամ գերի են ընկել, կամ կամովին ապավինել են հաղթողի մեծահոգությանը։ Նրանք միամտություն են ունեցել կարծելու, որ իրենք կհամարվեն զինվորական գերիներ և դուրս են եկել իրենց թաքստի տեղերից և ներկայացել են թուրք կոմենդանտին։ Նույն տեղում կոտորված են, բացի տեղացիներից, բազմաթիվ գաղթականներ Կարսի և Ալեքսանդրոպոլի շրջաններից։ Ընդհանուր առմամբ Ղարաքիլիսայի շրջակայքում գնդակահարված են մի քանի հազար մարդ... Պետք է կարծել, որ այդ թիվը 3000-ից պակաս չէ, թեև ոմանք հասցնում են մինչև 7000-ի։ Այս թվի մեջ չեն մտնում սպանված տեղացիները՝ թվով 1470 հոգի...

Այս ձևի կոտորածներ տեղի են ունեցել նաև Համամլուում, Հաջիղառայում, Դարբասում, Ղշլաղում և Եղաբլուում... Արևմտյան Փամբակի գյուղերից գերի են տարել հարյուրավոր երիտասարդների, որոնք գրեթե բոլորը ոչնչացել են Էրզրումի շրջանում՝ քաղցից, ծեծից և ուժից վեր աշխատանքներից։ Սակավաթիվ վերադարձողները պատմում են, որ նրանց, բացի այլ և

այլ տաժանակիր աշխատանքներից, նաև լծում էին սայլերին և քշում երկաթե ճիպոտներով։ Էրզրումում գտնված 8000 գերուց— Շիրակից և Փամբակից— վերադարձել են միայն 600 հոգի։ Այս թվերը շատ պարզ են խոսում։

Թե մեր շրջանում (Փամբակի— Հ. Խ.) և թե ամենուրեք առանձնապես հետամտել են տաճկահայերին և ճանկ ընկածներից ոչ մեկը չի խուսափել մահից։

Ինչ որ ասվեց Փամբակի մասին, նույնը կարելի է կրկնել Լոռու մասին ավելի փոքրացրած մասշտաբով»։[1]

Փամբակից և Լոռուց օկուպանտները տարան 36 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 110 հազար ոչխար։ Միայն Փամբակի գյուղերից նրանք հավաքեցին մոտ 527 հազար փթից ավելի հացահատիկ։

Անդրկովկասը հեշտությամբ նվաճելու և ստրկացնելու նպատակով գերմանա-թուրքական իմպերիալիստները որոշում են իրենց գործակալներից՝ մենշևիկներից, մուսավաթականներից և դաշնակներից Անդրկովկասում ստեղծել երեք բուրժուա-նացիոնալիստական կոնտրռևոլուցիոն կառավարություններ։ Շուտով այդ որոշումը կատարվում է։ 1918 թ. մայիսի 26-ին այսպես կոչված Անդրկովկասյան Սեյմը իրեն հայտարարում է ցրված և նրա փոխարեն գերմանա-թուրքական իմպերիալիստները իշխանության գլուխ են դնում մենշևիկներին Վրաստանում, մուսավաթականներին՝ Ադրբեջանում և դաշնակներին՝ Հայաստանում։

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում թուրքերի և դաշնակների միջև «հաշտության և բարեկամության» (!) մի կոնվենցիա է կնքվում, որի համաձայն՝ Թուրքիան զավթում էր Սուրմալուի գավառը, Ալեքսանդրոպոլի, Էջմիածնի և Երևանի գավառների մեծ մասը։ Պայմանագրի մեկ կետով գերմանա-թուրքական իմպերիալիստների գործակալներ՝ դաշնակները համաձայնվում էին թույլ տալ թուրքական զորքերին՝ Հայաստանի տերիտորիայով անցնել Ադրբեջան՝ Բաքվում սովետական իշխանության դեմ հարձակվելու համար, իսկ մի ուրիշ կետով համաձայնվում էին թուրքերի օգնությամբ ճնշել Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը՝ սովետական իշխանության հաստատման համար։ Հայաստանը պիտի զորացներ իր բանակը, ոչ մի հարաբերություն չպիտի ունենար Թուրքիայի թշնամի պետությունների հետ, երկաթուղու կայարանները պիտի լինեին թուրքերի հսկողության տակ։ Դաշնակցական Հայաստանի տերիտորիան կազմում էր մոտ 11 հազար քառակուսի վերստ լեռնոտ մի տարածություն։ «Պետական» սահմանը հարավից սկսվում էր Արփա գյուղից (Շարուր) և գնալով դեպի հյուսիս՝ կտրում էր Էջմիածին—Սարդարաբադ խճուղին Էջմիածնից յոթ վերստ հեռավորության վրա, ապա գնում էր դեպի Արագած, Աղբուլաղ՝ մինչև Ախալքալաքի գավառի սահմանը։[2]

Թուրքական զավթիչների կողմից այդ զիջումն էլ ժամանակավոր խաղ էր։ Նրանք պատրաստվում էին գրավել և այդ տերիտորիան։ Թուրքերը մտադրվում էին այդ անել Բաքուն գրավելուց հետո։ Սակայն Բաքվում սովետական իշխանության հերոսական պայքարը թուրքական զավթիչների դեմ թույլ չտվեց նրանց իրականացնելու իրենց այդ պլանը։ Թուրքերը Բաքուն գրավեցին ավելի ուշ, քան իրենք էին ենթադրում՝ սեպտեմբերի 15-ին, իսկ գրա-

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 70 202, գ. № 1271, թ. 47։

[2] Այդ կոնվենցիան տես Հայկական ՍՍՌ Պետական կենտր. արխիվ, ֆոնդ № 68 200, գործ 11 (ամբողջ գործը)։

վումից քիչ անց՝ 1918 թ. նոյեմբերին գերմանական կոալիցիան պարտվեց առաջին համաշխարհային պատերազմում և Թուրքերը հարկադրված եղան թողնել Անդրկովկասը։

Անդրկովկասում երեք բուրժուա-նացիոնալիստական կառավարություններ ստեղծելուց հետո, գերմանա-Թուրքական զավթիչներն անցան իրենց հիմնական խնդրի իրականացմանը՝ հարձակվել Բաքվի սովետական իշխանության վրա։ Գերմանա-Թուրքական իմպերիալիստների հետ միասին Բաքվի վրա արշավեցին նրանց ստոր վարձկանները— անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն ուժերը։ Բաքվի ժողովրդական Կոմիսարների Սովետը դեռ 1918 թ. մայիսի վերջերին դիմեց Անդրկովկասի աշխատավորներին կոչելով նրանց պաշտպանել սովետական իշխանությունը Բաքվում, էլ ավելի ուժեղացնել պայքարը սովետական իշխանության հաստատման համար ամբողջ Անդրկովկասում։ Կոչը գրել էր Ստ. Շահումյանը։

«Բաքվի պրոլետարիատը,— ասվում էր կոչում,— առաջինն էր, որ հրաչակեց իր համերաշխությունը Ռուսաստանի Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլուցիայի հետ և դեմ դնաց Անդրկովկասյան կոմիսարիատին ու սեյմին։ Բաքվի պրոլետարիատն այժմ ևս բարձր է պահում սովետական իշխանության դրոշը և պատրաստ է պայքարելու ամբողջ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիության ազատության ու երջանկության համար»։ Կոչը Բաքվի Սովետի դրոշի տակ էր հրավիրում Անդրկովկասի բոլոր աշխատավորներին. «Բաքվի պրոլետարիատը ձգտում է Անդրկովկասում ստեղծել նոր կառավարություն, առանց բեգերի ու իշխանների և առանց հայ նացիոնալիստների,— բանվորների ու գյուղացիների կառավարություն, Սովետների կառավարություն։ Այդ կառավարությունը՝ դաշնակցած ամբողջ ռուսաստանյան պրոլետարիատի ու գյուղացիության հետ՝ կպաշտպանի Անդրկովկասի միասնությունը Ռուսաստանի հետ, կխորտակի բոլոր ազգությունների կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը և կհաստատի ամբողջ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների եղբայրություն...

Բոլոր մութ ուժերը ոտքի են ելել Բաքվի Սովետի դեմ, Անդրկովկասի միակ ազատ անկյունի դեմ։ Բաքվի Սովետի դրոշակը ազատության դրոշակ է ու աշխատավորների եղբայրության դրոշակ։ Բոլորդ մտեք մեր դրոշակի տակ»։[1]

Բացի գերմանա-Թուրքական իմպերիալիստներից, այդ ժամանակ Բաքվի վրա հարձակման էին պատրաստվում նաև անգլիական իմպերիալիստները Պարսկաստանից։

Լենինը և Ստալինը անդուլ կերպով օգնում, ղեկավարում և ոգեշնչում էին Բաքվի բանվորների և Ադրբեջանի գյուղացիների պայքարը՝ օտարերկրյա զավթիչների ու նրանց գործակալների դեմ, հանուն սովետական իշխանության հաղթանակի ամբողջ Անդրկովկասում։ Սովետական զորքերը ընկ. ընկ. Ա. Միկոյանի և Կորդանովի հրամանատարությամբ հերոսաբար կռվում էին թվով գերազանց գերմանա-Թուրքական զավթիչների դեմ, Սովետական Բաքուն պաշտպանելու համար։

Գերմանա-Թուրքական և անգլիական ինտերվենտների ճնշման տակ, նրանց գործակալներ՝ էսերների, մենշևիկների և հատկապես դաշնակների,

---

[1] Ս ա հ ա ն ջ ա ն, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 603—607։

որոնք Բաքուն անգլիական օկուպանտների ձեռքը գցելու համար բանակցություններ մտել էին նրանց հետ, քայքայիչ աշխատանքի հետևանքով սովետական իշխանությունը Բաքվում՝ 1918 թ. հուլիսի 31-ին, ժամանակավորապես ընկավ։ Հենվելով դաշնակների, էսերների, մենշևիկների վրա, անգլիական իմպերիալիստները օգոստոսին մտան Բաքու և անմիջապես սկսեցին թալանչիաբար արտահանել նավթը։ Անգլիական իմպերիալիստները իրենց ստոր վարձկանների՝ էսերների, մենշևիկների, դաշնակների միջոցով 1918 թ. սեպտեմբերի 20-ին անդրկովկասյան ավազուտներում գազանաբար հոշոտեցին Բաքվի բանվորների լավագույն ներկայացուցիչներին, նշանավոր բոլշևիկներին՝ 26 կոմիսարներ— Ստ. Շահումյանին, Ա. Ջափարիձեին, Մ. Ազիզբեկովին, Ի. Ֆիալետովին և մյուսներին։

Գերմանա-թուրքական զավթիչների հեռանալուց հետո Անդրկովկաս և Հայաստան մտան Անտանտայի պետությունների կողմից անգլիական օկուպացիոն զորքերը։ Անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն կառավարություններն այժմ ծառայության անցան անգլո-ամերիկյան իմպերիալիստների մոտ և դարձան նրանց հլու գործակալությունները։ Օգտագործելով նրանց, անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիստներր պատրաստվում էին Անդրկովկասը պոկել Սովետական Ռուսաստանից և զավթել այն։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ (1918—1920 Թ. Թ.)

Դաշնակցական կառավարությունն իր գոյության ամբողջ ընթացքում հանդիսացավ իմպերիալիստական պետությունների գործակալությունը։ Գերմանա-թուրքական իմպերիալիստների կողմից Հայաստանում իշխանության գլուխը գրավելուց հետո նա հանդիսացավ Գերմանիայի և Թուրքիայի գործակալությունը, իսկ գերմանական կոալիցիայի պարտությունից հետո, մինչև իր գոյության վերջը, Անտանտայի պետությունների, գլխավորապես Անգլիայի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների։ Գերմանա-թուրքական իմպերիալիստների պահանջով նա թույլատրեց թուրքական զորքերին Հայաստանի տերիտորիայով անցնել դեպի Ադրբեջան՝ սովետական Բաքվի վրա հարձակվելու համար, նրանց թելադրանքով Բաքվում գտնվող դաշնակները քայքայիչ ու կոնտրռևոլուցիոն աշխատանք էին տանում սովետական իշխանության դեմ։ Խոսելով դաշնակների այդ սև աշխատանքի մասին, Ստ. Շահումյանը գրում էր. «Մենք մատնանշեցինք նրանց (դաշնակների— Հ. Է.) որոշման վրա՝ սպիտակ դրոշակ բարձրացնել և քաղաքը հանձնել թուրքերին։ Նրանք չեն հանդգնի հերքել փաստերը,— որովհետև այդ գիտեն հարյուրավոր մարդիկ»։[1]

Ընկեր Ստալինը 1920 թ. հոկտեմբերին հրապարակած «Սովետական իշխանության քաղաքականությունը ազգային հարցի վերաբերմամբ Ռուսաստանում» աշխատությունում, խոսելով Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո Ռուսաստանի ծայրամասերում առաջացած կոնտրռևոլուցիոն կառավարությունների «անկախության» մասին, գրում է. «Այսպես կոչված անկախ Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և մյուսների այսպես

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 687։

կոչված անկախությունը լոկ մի խաբուսիկ երևութականություն է, որը քողարկում է այդ, թող ներվի ասել, պետությունների կատարյալ կախումը իմպերիալիստների այս կամ այն խմբից»։[1]

Վախենալով սովետական իշխանության հաղթանակից Հայաստանում, դաշնակները երկիրը դրին իմպերիալիստական պետությունների լծի տակ։ Դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրը, իր մի զեկուցագրում, ուղղված կառավարության նախագահին, 1919 թ. սկզբներին, առաջարկում էր քննության առնել և որոշել, թե Անտանտայի որ պետության լծի տակ պիտի դրվեր Հայաստանը։[2]

«1918—1920 թ. թ. շրջանում Հայաստանում իշխանության ղեկի մոտ գտնվելով, դաշնակները, հավատարիմ իրենց բնությանը, խաղալիք էին գերմանական, անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների ձեռքին»,[3]— գրում է ընկ. Գր. Հարությունյանը։ Հանդիսանալով անգլո-ամերիկյան իմպերիալիստների գործակալությունը, դաշնակցական կառավարությունը շարժվում էր Անգլիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների թելադրանքով։ Ոչ միայն ամերիկյան գնդապետ Հասկելի, որին Միացյալ Նահանգները, Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան Հայաստանի «գերագույն կոմիսար» էին նշանակել, այլև այդ պետությունների Անդրկովկասում և Հայաստանում գտնվող որևէ ներկայացուցչի ասածն օրենք էր դաշնակցական կառավարության համար։ Անգլիական կամ ամերիկյան իմպերիալիստները Հայաստանում իրենց զգում էին որպես իրենց գաղութում։ Ամերիկացիները այնքան ազատ էին զգում, որ ինքնագլուխ ձերբակալություններ էին կատարում։ Եթե դաշնակները սողում էին իրենց տերերի՝ անգլո-ամերիկյան իմպերիալիստների ոտքի տակ, ապա Հայաստանի աշխատավորները բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, Լենինի և Ստալինի ցուցումներով, օրեցօր ուժեղացնում էին իրենց պայքարը թե դաշնակների և թե անգլո-ամերիկյան իմպերիալիստների դեմ՝ հանուն սովետական իշխանության հաղթանակի Հայաստանում։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստները ակտիվորեն օգնում էին դաշնակներին դաժանորեն ճնշելու Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը սովետական իշխանության հաստատման համար։ Այդ նպատակով անգլո-ամերիկյան ինտերվենտները Անդրկովկասում և Հայաստանում ստեղծել էին իրենց սեփական հետախուզությունը։ Անդրկովկասում գտնվող անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատարությունը 1919 թ. մարտին դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին հայտնելով Ալեքսանդրոպոլում բոլշևիկների աշխատանքի մասին, կարգադրում էր անմիջապես խիստ ռեպրեսիվ միջոցների դիմել, դադարեցնելու համար այն։ «Բրիտանական ուժերի հրամանատար դեներալը Անդրկովկասում,— ասվում էր անգլիական հրամանատարության այդ գրությունում,— տեղեկություն ունի վստահելի աղբյուրներից, որ Ալեքսանդրոպոլում բոլշևիկյան կոմիտե է հաստատված և որը որոշ ժամանակ է արդեն, ինչ գործուն պրոպագանդա է անում աշխատավոր դասի, բանակի և երկաթուղու բանվորների մեջ»։[4] «Վստա-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 391։

[2] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆոնդ 670 199, գործ № 20, թ. 19—20։

[3] Գր. Հարությունյան, Սովետական Հայաստանի 25 տարին, Երևան, 1945 թ., էջ 8։

[4] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆոնդ № 67, 199, գործ № 12, թ. 77—78։

հելի աղբյուրը», որի մասին խոսվում էր գրության մեջ, անգլիական հետախուզությունն էր։

Հանդիսանալով Սովետական Ռուսաստանի ոխերիմ թշնամիներից մեկը, դաշնակները Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո անդրկովկասյան մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների հետ միասին զինված պայքարի էին դուրս հկել Սովետական Ռուսաստանի դեմ։ Նրանք շարունակեցին իրենց այդ նույն հակասովետական քաղաքականությունը և անգլո-ամերիկյան իմպերիալիստների ղեկավարությամբ մասնակցեցին Անտանտայի կողմից Սովետական Ռուսաստանի դեմ կազմակերպված արշավին։ Դաշնակները սերտ կապեր հաստատեցին Սովետական Ռուսաստանի դեմ կռվող ռուսական կոնտրռևոլուցիոն ուժերի պարագլուխների՝ Կոլչակի և ուրիշների հետ, իսկ սպիտակգվարդիական գեներալ Դենիկինի հետ ռազմական դաշինքի մեջ մտան։ Կապը գեներալ Դենիկինի հետ այնքան սերտ էր, որ համաձայն դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրի հայտարարության, Դենիկինը դաշնակցական Հայաստանը իր տերիտորիան էր համարում, իսկ դաշնակցական բանակը՝ իր զորամասերից մեկը։ Դենիկինի Թիֆլիսում գտնվող ներկայացուցիչը, հայտնի ցարական գեներալ Բարատովը, 1919 թ. դաշնակ Խատիսյանին հայտարարել էր, որ Դենիկինը դաշնակցական Հայաստանը իր դաշնակիցն է համարում»։[1]

Շնորհիվ դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների վարած շովինիստական քաղաքականության՝ ազգային երկպառակությունը Անդրկովկասում չտեսնված չափերի հասավ։ Իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո այդ կոնտրռևոլուցիոն կառավարությունները զինված պայքարի մեջ մտան իրար հետ։ Այդ ընդհարումները սկզբում հրահրվում էին դերսա-նա-թուրքական, իսկ հետագայում անգլո-ամերիկյան իմպերիալիստների կողմից։ Դաշնակների և մենշևիկների վարած ռազմատենչ-նացիոնալիստական քաղաքականության, ինչպես և անգլիական օկուպանտների հրահրումների հետևանքով, 1918 թ. վերջին եղբայրասպան ընդհարում տեղի ունեցավ հայ և վրացի ժողովուրդների միջև։ Այդպիսի ընդհարումներ էին տեղի ունենում հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև։

Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն կառավարությունները խստորեն հալածում էին ազգային փոքրամասնություններին։ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների՝ ադրբեջանցիների, ռուսների և ուրիշների հանդեպ դաշնակները վարում էին շովինիզմի քաղաքականություն, ավերում էին նրանց գյուղերը և կոտորում բնակիչներին։ Դաշնակներն ավերեցին Զանգիբասարի, Զանգեզուրի, Բասարգեչարի և այլ շրջաններում գտնվող ադրբեջանական գյուղերը։ Նույն վիճակին ենթարկվեցին Կարսի մարզի ռուսական և ադրբեջանական գյուղերը։ Ազգային փոքրամասնությունների կողմից լքված գյուղերի հողերը զավթում էին դաշնակցական մինիստրները, բարձրաստիճան պաշտոնյաները և խմբապետները։ «Դաշնակների ժամանակ ազգային քաղաքականությունը— դա մի ժողովրդի մյուսի դեմ գազանաբար գրգռելն էր»,[2] — գրում է ընկեր Ա. Միկոյանը։

---

[1] Այս մասին տես Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գործ № 720, թ. 76։

[2] Տես նույն ֆոնդը, գործ № 728, թ. 190—191։

[3] Ա. Ի. Միկոյան, Ճառ Երևանի Ստալինյան օկրուգի ընտրողների ժողովում, 9 դեկտեմբերի 1937 թ., Երևան, 1939 թ., էջ 10։

Հայաստանի առանց այն էլ հետամնաց տնտեսությունը լիակատար քայքայման հասավ դաշնակների օրով։ Մի քանի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք կառուցվել էին ցարիզմի ժամանակ, քայքայվեցին և դադարեցին աշխատելուց։ Այդ ձեռնարկությունների, ինչպես և երկաթուղու բանվորությունը գտնվում էր տնտեսական և իրավական վերին աստիճանի ծանր պայմաններում։ Ձեռնարկատերերը բանվորներին անտանելի պայմաններում աշխատեցնում էին օրական 12—15 ժամ։ Երևանում գտնվող Սարկիսովի կաշվի գործարանի բանվորներն աշխատում էին մի շենքում, որի հատակը ջուր էր՝ կրով, բրդով և հոտած մսի կտորներով շաղախված։ Բանվորներն աշխատում էին բոկոտն։

Բանվորները ստանում էին չնչին աշխատավարձ, որը տրվում էր մեծ հապաղումով։ Դրամանիշների արագ արժեքազրկման և գների օրեցօր աճման պայմաններում այդ հանգամանքը խիստ ծանր էր անդրադառնում բանվորների տնտեսական դրության վրա։ Դաշնակցական կառավարությունը 1918 թ. հունիս ամսից մինչև 1920 թ. նոյեմբերը, այսինքն մինչև իր տապալումը, բաց էր թողել մեծ քանակությամբ դրամանիշ— 10 միլիարդ ռուբլուց ավելի։[1] Բանվորներն անհրաժեշտ կենսամթերքներ ձեռք էին բերում շուկայում, ուր ցորենի փութը 1920 թ. նոյեմբերին արժեր 35 հազար ռուբլի, իսկ կարտոֆիլինը՝ 18 հազար։[2]

Տնտեսության հիմնական ճյուղը հանդիսացող գյուղատնտեսությունը խիստ անկում ապրեց դաշնակների վարած պատերազմների, ազգային փոքրամասնությունների հալածանքի հետևանքով։ Անգամ Կարսի նահանգապետ Կորդանովը իր մի զեկուցագրում, ուր նա ամփոփում էր մարզի դրությունը դաշնակների օրով, ստիպված էր արձանագրելու այն փաստը, որ ազգային փոքրամասնությունների հալածանքը վերին աստիճանի ծանր հարված հասցրեց մարզի գյուղատնտեսությանը։ «... Քրդական վայրերը,— գրում էր նա իր զեկուցագրում,— հարստության մի անհուն տարածություն էր մեզ համար, բայց մենք չկարողացանք օգտագործել այդ գանձը, կեղեքեցինք, թալանեցինք այդ վայրերը... Քրդական վայրերը մատակարարում էին ոչ միայն Կարսի նահանգին, այլև Արարատյան դաշտին՝ տավար, ձի, մթերքներ։ Բայց մենք կարողություն չունեցանք տնտեսելու այդ մեծ հարստությունը և միանգամից ավերեցինք այդ աղբյուրը»։[3]

Գյուղատնտեսական գործիքների՝ արորների, դութանների և այլ գործիքների թիվը մեծ չափով պակասել էր։ Գյուղացիության մեծագույն մասը չուներ լծկաններ։ Ցանում էր գյուղի կուլակը, իսկ մնացած մասը, սովամահ չլինելու համար ստիպված էր չնչին գնով վաճառել իր հողը, անասունը կամ վերջին ունեցվածքը, որը գնում էր գյուղական բուրժուազիան։ Դաշնակները չէին կարող թաքցնել գյուղի բացարձակ մեծամասնության այդ թշվառ դրությունը։ Այսպես, օրինակ, էջմիածնի գավառի դաշնակցական զեմստվոյի վարչության նախագահը 1920 թ. հուլիսին հայտնում էր ներքին գործոց մինիստրին, որ «... Բազմաթիվ գյուղացիներ, ազատվելու համար սովի ճիրաններից, ստիպված են եղել վաճառել ամենաչնչին գներով մեծ արժողությամբ

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. № 40 113, գ. № 87, թերթ 3։
[2] Նույն տեղում, թ. 6։
[3] Նույն ֆոնդը, գործ № 1769, թ. 47։

կալվածներ (կալվածներ ասելով պիտի հասկանալ գյուղացու հողը կամ այգին— Հ. Ե.)։ Եղել են դեպքեր, երբ այդպիսի կալվածներ տրված են եղել քաղցի ու սովի վայրկենական անդիմադրելի պահանջին դոհացում տալու համար՝ մի քանի ֆունտ հացով կամ համարժեք դրամական գումարով... Եվ ահա ճիշտ այս ձևով գավառումս այժմ բազմաթիվ գյուղացիներ համարյա բոլորովին կորցրել են իրենց կարողության վերջին մնացորդը, իսկ քաղցի և սովի իրենց համար ստեղծված նպաստավոր հանգամանքներից ճարպկությամբ օգտվող մի քանի վաշխառուներ յուրաքանչյուր գյուղում հնարավորություն են գտել իրենց ձեռքում ամփոփելու բազմաթիվ ընտանիքների ունեցվածքը և այժմ անարգել վայելում են նրա արդյունքները...»։[1] Նոր-Բայազետի գավառից հայտնում էին, որ սովի հարկադրանքով գյուղացին ծախում է իր վերջին ունեցածը՝ անասունները, արտը, կալը, տունը։

Այս բոլորի հետևանքով ցանքերի քանակությունը կատաստրոֆիկ կերպով կրճատվեց, խիստ կերպով ընկավ և անասունների գլխաքանակը։ Եթե ամբողջ ցանքերի տարածությունը Հայաստանի ներկա տերիտորիայում 1913 թվին հասնում էր՝ 345,7 հազար հեկտարի, ապա 1919 թ. նա ընկավ մինչև 82,7 հազար հեկտարի։ 1913 թ. Հայաստանում ցանված էր 15,3 հազար հեկտար բամբակ, իսկ 1919 թ. միայն 0,6 հազար հեկտար։- Ոռոգման սիստեմը և նրա վրա հիմնվող ջրովի տնտեսությունները անկման հասան։

Դաշնակցական կառավարության հակաժողովրդական քաղաքականության պատճառով սովը երկրում ահռելի չափերի հասավ։ Ժողովրդական լայն մասսաները գալարվում էին սովի ճիրաններում։ Սովը և հիվանդությունները օրական հարյուրավոր մարդիկ էին տանում։ «Բավական է ասել, որ 1919 թվին Հայաստանի բնակչության յուրաքանչյուր հազար մարդուն ծնվում էր 8,7, իսկ մեռնում՝ 204,2 մարդ, այսինքն բնակչության նվազումը հասնում էր 195,5 մարդու յուրաքանչյուր հազար հոգուց»։[2]

1918 թ. սեպտեմբերի 26-ին Երևանում, սովի հետևանքով, ցույց է տեղի ունենում կառավարության դեմ։ Այդ օրը բազմության մի մեծ խումբ, բաղկացած գլխավորապես գաղթականությունից, հավաքվում է նախ պարետի շենքի և ապա ներքին գործոց մինիստրի տան առաջ և հաց պահանջում։ Բազմությունը ցրելու համար իշխանությունները ստիպված են լինում դիմել զինված ուժի։

Պաշտոնական տվյալների համաձայն Սուրմալվում «սովից մեռել էր գավառի բնակչության 60 տոկոսը»։[3] Բասարգեչարից 1920 թ. հունիսին հայտնում էին, որ շրջանի գյուղացիությունը հաց չունենալու պատճառով խոտով է կերակրվում և մարդիկ ամեն օր տասնյակներով մեռնում են։ Նույն դրությունն էր Դարալագյազում, Թալինում, Ալեքսանդրոպոլում և Հայաստանի մյուս շրջաններում։ Սովը Հայաստանում շարունակվեց դաշնակների տիրապետության ամբողջ ժամանակշրջանում։ 1919 թ. հունվարին Երևանում քաղցած ամբոխը շուկայում հարձակվում է հացի փռերի և հացավաճառների

[1] Նույն ֆոնդը, գործ № 1748, թ. 162։

[2] Социалистическое строительство Армянской ССР. Статистический сборник, Ереван, 1940 г., стр. 64.

[3] Դր. Հարությունյան, Սովետական Հայաստանի 25 տարին, Երևան, 1945 թ., էջ 8—9։

[4] Հայկական ՀՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. № 68 200, գ. № 312, թ. 16։

վրա։ Դարալագյազից 1919 թ. հունիսին հայտնում էին, որ «... Գաղթականներից... սկսած մինչև հողագործ գյուղացու ճնշող մեծամասնությունը կարոտ է մի կտոր հացի»։[1]

Ժողովրդական լայն զանգվածները նաև մերկ էին։ Էջմիածնի գավառի գեմստվոյական վարչության նախագահը 1920 թ. մարտին հայտնում էր ղաշնակցական կառավարության ներքին գործերի մինիստրին, որ «գավառի ազգաբնակությունը բառիս բուն նշանակությամբ մերկ է և բոկոտն։ Կան բազմաթիվ գյուղեր, որոնց բնակիչները մերկության պատճառով ամաչում են իրար հանդիպել և անհրաժեշտ դեպքում հարևան գյուղերը գնալ»։[2]

Դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի բնակչությունը ահաբեկված էր բազմաթիվ զինված պորտաբույծ խմբերի՝ մաուզերիստական խմբերի կողմից, որոնք կողոպտելով ու սպանելով՝ ապրում էին ժողովրդի հաշվին։ Սպանությունները, թալանը երկրում մեծ չափերի էին հասել և սիստեմատիկ բնույթ ստացել։ Դաշնակցական պաշտոնյաները, սկսած գյուղական լիազորներից մինչև մինիստրները, կատարում էին անօրինակ սանձարձակություններ, բռնություններ և գեղծումներ։ Ընկեր Ա. Միկոյանը գրում է. «... Հայաստանը դաշնակների ժամանակ որբերի երկիր էր, արցունքի երկիր, աղքատության ու վայրենի կամայականությունների երկիր»։[3] Հայ ժողովուրդն իր ազատագրումը սովետական իշխանության հաստատման մեջ էր տեսնում։ Հայ ժողովրդի լավագույն բարեկամներից մեկը՝ ընկեր Ս. Օրջոնիկիձեն 1918 թ. հոկտեմբերին Լենինին և Ստալինին ուղարկած իր հեռագրում խոսելով Անդրկովկասի դրության մասին, այսպես էր նկարագրում Հայաստանի վիճակը. «... Հայաստանի դրությունը ողբերգական է։ Երևանի նահանգի երկու գավառների փոքրիկ կտորի վրա կուտակվել են... գաղթականներ, որոնք մասսայաբար կոտորվում են սովից ու խոլերայից։ Թուրքերը օկուպացված գավառներում մորթել են բնակչության կեսը... Հայ ժողովուրդը անհամբերությամբ օգնություն է սպասում Սովետական Ռուսաստանից»։[4]

Դաշնակները երկիրը վերածեցին ավերակների, իսկ ժողովրդին՝ կանգնեցրին կործանման եզրին։ Նրանց երկու և կես տարվա արյունոտ տիրապետության ժամանակաշրջանը՝ հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջերից մեկն է։

* * *

Չնայած դաշնակների ամենադաժան հալածանքներին, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները չդադարեցրին իրենց պայքարը սովետական իշխանության հաղթանակի համար։ Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորները պայքարում էին Ռուսաստանի Կ(բ)Պարտիայի Անդրկովկասյան երկրային Կոմիտեի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ։ Կենսագործելով Լենինի և Ստալինի ցուցումները, ընկ. ընկ. Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը և Ա. Միկոյանը ղեկավարեցին Անդրկովկասի

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆ. 67/199, գ. 147, թ. 12։

[2] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆոնդ 69/201, գործ № 1748, թ. 37։

[3] Ա. Ի. Միկոյան, Ճառ Երևանի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների ժողովում, 9 դեկտեմբերի 1937 թ., Երևան, հրատ. 1939 թ., էջ 10։

[4] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, բաղվածքների ֆոնդ, № 255։

բանվորների և գյուղացիների պայքարը հանուն սովետական իշխանության հաղթանակի։

1918 թ. երկրորդ կեսում Հայաստանի մի քանի շրջաններում տեղի են ունենում գյուղացիական ելույթներ դաշնակցական կառավարության դեմ։ Այդ թվի հոկտեմբերին Նոր-Բայազետի գավառի Նորագուղ և Ղրշլաղ գյուղերի գյուղացիները զայրացած դաշնակցականների կամայականություններից՝ տեղական միլիցիայի հետ ունենում են ընդհարում, որի ընթացքում սպանվում և վիրավորվում են մի շարք գյուղացիներ։ Դաշնակցական կառավարության դեմ նույն թվին ելույթներ են տեղի ունենում Ապարանում, Զանգեզուրում և այլ վայրերում։

Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը դաշնակների դեմ ավելի լայն ծավալ ստացավ 1919 թ.։ Այդ թվի կեսերից ուժեղացավ բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը Հայաստանում, բոլշևիկների ազդեցությունը պրոֆմիություններում, գյուղացիների մեջ և բանակում։ Նույն թվի սեպտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որն ընտրեց բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար կենտրոն՝ Ռուսաստանի Կոմունիստական Պարտիայի Հայաստանի Կոմիտե՝ Արմենկոմ։ Սովետական իշխանության հաստատման համար Հայաստանի բանվորների և գյուղացիների մղած ռևոլյուցիոն պայքարում զգալի դեր խաղաց Հայաստանի կոմունիստական երիտասարդական «Սպարտակ» միությունը, որը հիմնադրվել էր 1919 թ. ապրիլին, Ղ. Ղուկասյանի գլխավորությամբ։

Բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ 1919 թ. Հայաստանում տեղի են ունենում մի շարք գործադուլներ և գյուղացիական ելույթներ, ուղղված դաշնակցական կառավարության դեմ։ 1919 թ. հուլիսին գործադուլ են հայտարարում Երևանի և Ալեքսանդրոպոլի արհեստանոցների բանվորներն ու ծառայողները։ Նոյեմբերին գործադուլ են հայտարարում Ալեքսանդրոպոլի տպագրական բանվորները, պահանջելով աշխատավարձի հավելում։ Նույն թվին գործադուլ է տեղի ունենում պետական ձեռնարկություններում— երկաթուղում, Կարսի ավտոդարաժում։ Հուլիս և դեկտեմբեր ամիսներին գործադուլ են հայտարարում Երևանի տպարանների և փոստ-հեռագրական բանվորներն ու ծառայողները։ Բոլշևիկների ղեկավարությամբ Սարիղամիշի բանվորները որոշում են ամերիկյան գնդապետ Հասկելի Սարիղամիշ գալու կապակցությամբ բողոքի ցույց կազմակերպել՝ հակառակ դաշնակների ցանկության, որոնք պատրաստվում էին նրան հանդիսավոր հանդիպում ցույց տալ։ Բանվորները քանդելով երկաթգիծը արգելակում են դաշնակների նպատակի իրականացումը[1]։

Դեռ փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայից հետո ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես և Անդրկովկասում ու Հայաստանում հողազուրկ և սակավահող գյուղացին պայքար էր սկսել հողի համար։ Այդ պայքարը ուժեղացավ և սրվեց Հոկտեմբերյան ռևոլուցիայից հետո։ Արդեն սավեց Լոռում և Հայաստանի մյուս շրջաններում ծայր առած ագրարային

[1] Համկ(բ)Պ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի Ինստիտուտի Հայկական Ֆիլիալի արխիվ, ֆոնդ № 33, պապկա № 8, գործ № 3, էջ 13։

չարժման մասին։ Կալվածատերերը Լոռում փորձեցին թուրքական օկուպանտների և դաշնակների միջոցով ճնշել գյուղացիների պայքարը հողի համար, բայց այդ նրանց չհաջողվեց։ 1918 թ. ամառը կալվածատերերը Լոռում թուրքական սվինների օգնությամբ հետ խլեցին գյուղացիների կողմից գրավված իրենց հողերը և սկսեցին հավաքել բահրան, սակայն գյուղացիները շարունակեցին պայքարը կալվածատերերի դեմ։ Նույն Լոռում, որը անգլիական ինտերվենտների կողմից 1919 թ. սկզբից վեր էր ածվել այսպես կոչված «չեզոք գոտու», ուր տեր և տնօրինություն էին անում անգլիական օկուպանտները, գյուղացիները բոլշևիկների գլխավորությամբ չդադարեցրին իրենց պայքարը հողի համար։

Էջմիածնի գավառի դաշնակցական զեմստվոյի վարչության նախագահը 1920 թ. ապրիլին դաշնակցական կառավարության ներքին գործերի մինիստրին ուղղած իր մի հաղորդման մեջ ահազանգում էր գավառի հողազուրկ և սակավահող գյուղացիների հող ստանալու բուռն պահանջի մասին։ «Այժմ շատ ուժեղ և սուր բնավորություն է ստացել ժողովրդի մեջ,— գրում էր զեմստվոյի վարչության նախագահը,— հողաբաժանության խնդիրը։ Տարիներով հողազուրկ գյուղացիները պահանջում են հող և հողի հավասարեցումն և արդեն իրենք սկսել են այդ գործը... Դրությունը լուրջ է և եթե մենք միջոցներ ձեռք չառնենք, իրենք առանց մեզ կռվով ու դավով կլուծեն այդ և նման շատ հարցեր»։[1]

Գյուղացիությանը մոլորեցնելու և նրան ռևոլուցիոն շարժումից հեռու պահելու համար դաշնակցական կառավարությունը սուտ խոստումներ է տալիս գյուղացիությանը հող տալու մասին։ Իրականում դաշնակները ոչ մի կալվածատերից մի թիզ հող անգամ չխլեցին ու չտվին գյուղացուն։ Գյուղացին Հայաստանում հող ստացավ միայն սովետական իշխանության հաստատումից հետո։

1919 թ. տեղի են ունենում մի շարք գյուղացիական ելույթներ։ Հունիսին Շամշադինի շրջանի Ղրղու, Նորաշեն, Վերին Կարմիր-Ագրյար, Բերդ և այլ գյուղերի գյուղացիները հրաժարվում են դինվորներ տալ դաշնակցական կառավարության, պահանջում էին վերջ տալ ազգային փոքրամասնությունների հալածանքներին։ Գյուղացիների ելույթը ճնշելու համար դաշնակցական կառավարությունը պատժիչ զորամաս է ուղարկում Շամշադին։ Կառավարության դեմ ապստամբվում է և Դարալագյազ գավառի Մարտիրոս գյուղը, որի բնակիչները զայրացած էին դաշնակցական իշխանությունների սանձարձակությունների և կամայականություններից։

Խոշոր դեպքեր են տեղի ունենում 1920 թ. հունվարին Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանում։ Զայրացած դաշնակների հակաժողովրդական բարբարությունից, բանվորները բողոքման մեջ են մտնում դաշնակցական իշխանությունների հետ։ Դաշնակները ձերբակալում են 15 ռևոլուցիոն բանվորների։ Ի պատասխան դաշնակների կողմից գործադրվող բռնությունների՝ բանվորները գործադուլ են հայտարարում և պահանջում ազատել իրենց ընկերներին։ Երկաթուղային բանվորների պայքարին միանում են քաղաքի մյուս աշխատավորները։ Բանվորների ելույթը ճնշելու համար դաշնակները գործի են դնում երկաթուղային միլիցիային, որի հետևանքով տեղի է ունենում զինված բնդհարում։

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆոնդ № 69/200, գործ № 1748, թ. 69։

1919 թ. դեկտեմբերի վերջերին և 1920 թ. հունվարի սկզբներին տեղի ունեցավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին կոնֆերանսը։ Կոնֆերանսը որոշեց զինված ապստամբության միջոցով տապալել դաշնակցական կառավարությունը և հաստատել Հայաստանում սովետական իշխանություն։ Կոնֆերանսից հետո պարտիական կազմակերպությունները կազմակերպական-մասսայական լայն աշխատանքներ ծավալեցին՝ կոնֆերանսի որոշումներն իրագործելու համար։ Հայաստանի պարտիական կազմակերպությունների աշխատանքի աշխուժացման մասին ընկեր Ա. Միկոյանը 1920 թ. մարտի 6-ին հայտնում էր ընկ. Ս. Կիրովին, որ «Հայաստանում աշխատանքը կարգի է գցվել։ Մեր ուժերն աճում են»։[1] Ընկեր Ս. Կիրովն իր հերթին այս մասին հետևյալ օրը հայտնում է Մոսկվա ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեին։

1920 թ. մարտի վերջերին Կարմիր Բանակը մաքրեց Հյուսիսային Կովկասը կոնտրռևոլուցիոն ուժերից և մոտեցավ Անդրկովկասի սահմաններին։ Կարմիր Բանակի հաղթանակները չէին կարող չոգևորել Անդրկովկասի աշխատավորներին նրանց պայքարում, ուղղված օտարերկրյա զավթիչների և վերջինների գործակալության՝ անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն կառավարությունների դեմ։ 1920 թ. մարտի 15-ին ՌԿ(բ)Պ Կովկասյան երկրային Կոմիտեն Կովկասի բոլոր բոլշևիկյան կազմակերպությունների և ժողովուրդների աշխատավորական մասսաների ներկայացուցիչների կողմից դիմում ուղարկեց Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեին, Ժողովրդական Կոմիսարների Սովետին, Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալին և Կարմիր Բանակին։ «Մենք, Կովկասի բոլոր ժողովուրդների աշխատավորական մասսաների անունից,— ասվում էր այդ դիմումում,— մեր եղբայրական ջերմ ողջույնն ենք հղում ռուսական պրոլետարիատին, դյուղացիությանն և Կարմիր Բանակին։ Ձեր հաղթանակները, թանկագին եղբայրներ և ընկերներ, քաղաքացիական կռվի ճակատներում, ձեր անօրինակ հերոսական սխրագործությունները մարտի դաշտում և աշխատանքի ճակատում, մեր սրտերը լցնում են արիությամբ և համոզմամբ մեր հաղթանակի նկատմամբ...

Մենք չենք ուզում մնալ ստրուկ, մանավանդ այժմ, երբ մեր կողքին կանգնած է Ռուսաստանի ազատագրված պրոլետարիատը, որի հետ մենք ցանկանում ենք միասնական պրոլետարական ինտերնացիոնալ ընտանիքի մեջ մտնել։

... Մենք անսասանորեն վստահ ենք և հաստատապես համոզված, որ Սովետական Բանվորա-Գյուղացիական Ռուսաստանը, Կոմունիստական Ինտերնացիոնալը և փառապանծ Կարմիր Բանակը անտարբեր ականատեսներ չեն մնա մեր կողմից դեղին-սև միացյալ կոնտրռևոլուցիայի դեմ տարվող անհավասար պայքարում և ակտիվ կերպով կօգնեն մեզ ազատվելու կապիտալի իշխանությունից։

Մենք խիստ տենչում ենք ռուս պրոլետարիատի հետ ձեռք ձեռքի տված մտնել ընդհանուր աշխատանքի և սոցիալիստական շինարարության նոր կյանքի մեջ»։[2]

---

[1] С. Киров, Статьи, речи, документы. Том I, Москва, 1936 г., стр. 205, 219.

[2] Այս փաստաթղթերը մենք բերում ենք Г. В. Хачапуридзе „Большевики Грузии в боях за победу Советской власти" աշխատությունից, Մոսկվա, 1947 թ., էջ 180—182։

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի ապստամբ բանվորները և գյուղացիները Սովետական Ռուսաստանի փառապանծ 11-րդ բանակի օգնությամբ Ադրբեջանում հաստատեցին սովետական իշխանություն։ Ադրբեջանի աշխատավորների այդ հաղթանակը մեծ չափով ոգևորեց Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին դաշնակների դեմ ուղղված նրանց պայքարում և նոր թափ հաղորդեց նրան։

Բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ 1920 թ. Հայաստանի բոլոր խոշոր վայրերում՝ Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում տեղի ունեցան մայիսմեկյան ցույցեր, ուղղված դաշնակցական կառավարության դեմ։ Ցույցերն ընթացան բոլշևիկյան լոզունգների տակ։ Այդ լոզունգներն էին՝ «Կեցցե Սովետական Ռուսաստանը», «Կեցցե Սովետական Ադրբեջանը», «Կեցցե Սովետական Հայաստանը», «Կեցցե Կոմունիստական պարտիան», «Կորչի դաշնակցական կառավարությունը» և այլն։

Աշխատավորներին բոլշևիկյան ազդեցությունից հեռու պահելու, ցույցերին հակակառավարական բնույթ չտալու նպատակով դաշնակները իրենք ևս փորձեցին անցկացնել մայիսի մեկի տոնակատարությունը։ Բայց նրանց այդ փորձը ամենուրեք խայտառակորեն տապալվեց։ Այն վայրերում, ուր տեղի ունեցան մայիսմեկյան ցույցեր, մասսաները դնացին բոլշևիկների ետևից։ Ցույցերի հակադաշնակցական, հակակառավարական բնույթը, մասսաների մարտական տրամադրությունը ցույց տալու համար համառոտակի նկարագրենք Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում և Սարիղամիշում տեղի ունեցած ցույցերը։

Մայիսմեկյան ցույցը Երևանում անցնում է բոլշևիկների ազդեցության տակ։ Բոլշևիկների կողմից կազմակերպված Երևանի բանվորությունը գնում է մինչև դաշնակցական «պարլամենտի» շենքը։ Ճանապարհին երթին միանում են բազմաթիվ համակրողներ։ «Պարլամենտի» շենքի առջև տեղի է ունենում միտինգ, ուր կրակոտ ճառով, ուղղված դաշնակցական և անդրկովկասյան մյուս կոնտրռևոլուցիոն կառավարությունների դեմ, հանդես է գալիս բոլշևիկ Ս. Ալավերդյանը, որի ելույթը մեծ ոգևորություն է առաջացնում։ Միտինգում բոլշևիկները ցրում էին իրենց թռուցիկները։ Թե երթի ժամանակ և թե միտինգում լսվում էին «Կորչի դաշնակցական կառավարությունը», «Կեցցե Սովետական Ռուսաստանը» բացականչությունները։ Ցույցի ժամանակ զինվորներն իրենց համակրանքն էին հայտնում բոլշևիկներին։

Հայաստանի բոլոր վայրերում տեղի ունեցած մայիսմեկյան ցույցերից ամենաուժեղը Ալեքսանդրապոլում էր, որտեղ գտնվում էր երկաթուղային բանվորների մեծ մասը և ուր ուժեղ էր բոլշևիկյան կազմակերպությունը։ Այստեղ ևս ցույցն անցնում է բոլշևիկյան լոզունգների տակ։ Այդ օրը բոլշևիկները կոչ էին հրատարակել, որի մեջ ասվում էր, որ մոտ է դաշնակցական կառավարության տապալման օրը։ Մայիսի մեկի առավոտյան Ալեքսանդրոպոլի կայարանում տեղի է ունենում միտինգ, ուր խոսում են բոլշևիկ-հռետորները։ Միտինգից հետո ցուցարարները շարժվում են դեպի քաղաք։ Դեպոյի բանվորների հրավերով գծի սպասարկման բանվորները թողնում են դաշնակների կողմից կազմակերպված միտինգը և ընդհարվելով նրանց հետ՝ միանում են բոլշևիկյան դրոշների տակ գտնվող ցուցարարներին։ Մինչև քաղաքի կենտրոն հասնելը՝ երկաթուղային դպրոցի մոտ սկսվում է նոր միտինգ, ուր բոլշևիկյան հռետորները հանդես են գալիս հակակառավարական ելույթ-

ներով։ Այստեղից ցուցարարները շարժվում են դեպի քաղաքի կենտրոնը։ Քաղաքային այգու մոտ բացվում է մեծ միտինգ, որը անցնում է բարձր տրամադրությամբ և ուր մեծ հաջողությամբ ելույթներ են ունենում բոլշևիկները։ Քաղաքի կայազորի պատգամավորների խնդիրքով ցուցարարները գնում են դեպի զորանոցները։ Այստեղ հանդես է գալիս Ալեքսանդրոպոլի կայարանում կանգնած «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատար Սարգիս Մուսայելյանը, որն իր և իր զինվորների կողմից հայտարարում է, որ իրենք պատրաստ են պայքարելու սովետական իշխանության հաստատման համար Հայաստանում։ Հնչում են «Կեցցե բանվորների և զինվորների դաշինքը», «Կորչի խմբապետական կառավարությունը» և այլ բոլշևիկյան լոզունգներ։ Միտինգը ողջույնի հեռագիր է ուղարկում Ադրբեջանի Ռազմահեղափոխական Կոմիտեին։ Այդ օրը բոլշևիկների կողմից կազմակերպված ցույցին մասնակցում են մոտ հինգ հազարից ավելի մարդ։

Կարսում և Սարիղամիշում մայիսի մեկին աշխատավորները նույնպես դուրս են գալիս բոլշևիկյան դրոշների տակ։ Կարսում աշխատավորները կազմակերպված շարքերով նախ շարժվում են դեպի կայարան, ուր տեղի է ունենում միտինգ, ապա անցնելով գլխավոր փողոցներով՝ կանգ են առնում քաղաքի հրապարակում, որտեղ կրկին տեղի է ունենում միտինգ։ Թե կայարանում և թե քաղաքի հրապարակում կայացած միտինգում մեծ ոգևորություն են առաջացնում բոլշևիկ-հռետորների ելույթները։ Սարիղամիշում աշխատավորների հետ միասին ցույցին ակտիվորեն մասնակցում են և կայազորի զինվորները։ Բոլշևիկները հատուկ գնացք են ուղարկում Կարսաղուրղան, բանվորներին և զինվորներին Սարիղամիշ բերելու՝ ցույցին մասնակցելու համար։ Ցուցարարները նախ գնում են դեպի 4-րդ գնդի զորանոցը, ուր սկսվում է միտինգ, իսկ հետո շարժվում են դեպի կայարան, ուր և փոխադրվում է միտինգը։ Միտինգի մասնակիցները մեծ ոգևորությամբ լսում և արձագանքում են բոլշևիկ հռետորներին, որոնց թվում և 4-րդ գնդի զինվորների ներկայացուցիչներին։ Աշխատավորներին ահաբեկելու և մայիսմեկյան ցույցը խանգարելու նպատակով դաշնակները Սարիղամիշ էին բերել մի խումբ մաուզերիստների։ Սակայն 4-րդ գնդի զինվորները, որոնք տրամադրված էին բոլշևիկորեն, թույլ չեն տալիս, որ դաշնակները իրագործեն իրենց մտադրությունը։

Մայիսմեկյան ցույցերը եկան ասելու, որ ժողովրդական լայն մասսաները գնում են բոլշևիկների ետևից և պատրաստ են թոթափելու իրենց ուսերից անգլո-ամերիկյան իմպերիալիստների և նրանց գործակալ դաշնակների լուծը և Հայաստանում հաստատել սովետական կարգեր։ Իրավացի էր զրահապատ գնացքի հրամանատար Ս. Մուսայելյանը, երբ հայտարարում էր դաշնակցական բանակի գեներալներից մեկին՝ Գամազովին, որը խորամանկաբար փորձում էր Ալեքսանդրոպոլից Երևան բերել զրահագնացքը, թե ժողովրդական լայն մասսաները պահանջում են սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։ Ցույցերն ապացուցեցին և այն, որ բանակում ուժեղ էր բոլշևիկների ազդեցությունը և զինվորները ևս պատրաստ էին ոտքի ելնել սովետական իշխանության հաղթանակի համար։ Մայիսի մեկից հետո Ալեքսանդրոպոլում գտնվող զորամասերի ներկայացուցիչներն ամեն օր գալիս էին կայարան և բոլշևիկներին իրենց պատրաստակամությունը հայտնում առաջին իսկ կոչով իրենց զենքն ուղղել դաշնակցական կառավարության դեմ։

Արմենկոմի համար պարզ է դառնում, որ ապստամբությունը ամենամոտիկ ժամանակամիջոցի խնդիր է։ Նա մշակում է ապստամբության ծրագիր, համաձայն որի ապստամբության ազդանշան տվողը պիտի լիներ Ղազախը, որը սահմանակից լինելով Սովետական Ադրբեջանին՝ ուներ ամուր թիկունք, որտեղից օգնություն կստանար։ Բայց դեպքերը մայիսի մեկից հետո ընթացան այնպես, որ ապստամբության նախաձեռնողը Ալեքսանդրոպոլը հանդիսացավ։ Մայիսի մեկից հետո «Վարդան զորավար» զրահագնացքը և Ալեքսանդրոպոլ կայարանը գտնվում էին ապստամբ վիճակում։ Անհրաժեշտ էր անմիջապես գլխավորել արդեն փաստորեն սկսված ապստամբությունը Ալեքսանդրոպոլում և միաժամանակ հրահանգ տալ սկսել նաև Ղազախում և ուրիշ վայրերում։ Սակայն Արմենկոմը նախ մեծ հապաղումով է իր ներկայացուցիչներին ուղարկում Ալեքսանդրոպոլ՝ տեղում ծանոթանալու դեպքերի հետ և երկրորդ՝ նրանց հանձնարարում է աշխատել կասեցնել ապստամբությունը և միայն անկարելիության դեպքում համաձայնություն տալ սկսել այն։

Մայիսի 7-ին Ալեքսանդրոպոլում, զրահագնացքում, տեղի է ունենում Ալեքսանդրոպոլի և նրա շրջակա գյուղերի ու Կարսի, Սարիղամիշի, Ղարաքիլիսայի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, մասնակցությամբ Արմենկոմի ներկայացուցիչների։ Խորհրդակցությունը որոշում է սկսել զինված ապստամբությունը։ Ապստամբությունը ղեկավարելու համար խորհրդակցությունն ընտրում է Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտե և ցուցում է տալիս, որ ռազմա-ռևոլուցիոն կոմիտեներ կազմակերպվեն նաև շրջաններում։

Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն ևս իր հերթին հայտնաբերում է դանդաղկոտություն, անհամարձակություն և անթույլատրելի բարեհոգություն դեպի դաշնակները և մյուս կոնտրռևոլուցիոներները։ Ալեքսանդրոպոլում և Հայաստանում նա սովետական իշխանություն է հայտարարում միայն մայիսի 10-ին, այնինչ այդ կարելի էր անել խորհրդակցությունից անմիջապես հետո։ Այդ օրը նա հրապարակում է իր դեկլարացիան, ուր ասվում էր, թե աշխատավորների կամքով նա Հայաստանը հայտարարում է Սովետական։ Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն նույն օրը մի կոչով դիմում է Ալեքսանդրոպոլի աշխատավորներին՝ զգուշացնելով նրանց դաշնակների և մութ ուժերի սև աշխատանքից։

Քաղաքի տերը դառնալով, սակայն, Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն զրահագնացքից չի փոխադրվում այնտեղ, այլ նշանակում է իր արտակարգ կոմիսարին։ Մինչդեռ անհրաժեշտ էր փոխադրվել քաղաք և անմիջապես ձեռնամուխ լինել սովետական օրգանների կազմակերպման։

Միաժամանակ ապստամբում են և Ալեքսանդրոպոլի շրջակա գյուղերը։ Քավթառլուի շրջանի գյուղացիներն իրենց գյուղերից դուրս են վռնդում դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին և գյուղերում հայտարարում սովետական իշխանություն։

Կարսում և Սարիղամիշում ապստամբությունը պիտի սկսվեր Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեից հրահանգ սպանալուց հետո։ Նախօրոք երկու տեղումն էլ կազմակերպվում են ռազմառևոլուցիոն կոմիտեներ։

Կարսում ապստամբությունը սկսվում է մայիսի 10-ին։ Այդ օրը տեղակա՛ն ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն, որի գլուխն էր անցել աննկուն բոլշևիկ

Ղ. Ղուկասյանը, Կարսում հայտարարում է սովետական իշխանություն։ Դաշնակները փորձում են դիմադրել։ Նրանք շրջապատում են ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի շենքը, բայց պարտվում են։ Այնուհետև նրանք փորձում են զինաթափ անել պարետային վաշտի զինվորներին, բայց վերջինները սպառնում են կրակ բացել և դաշնակները ցրվում են։ Ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն գրավում է քաղաքի կարևոր հիմնարկությունները՝ փոստ-հեռագրատունը, բանկը և այլն։ Քաղաքը փաստորեն անցնում է ռազմա-ռևոլուցիոն կոմիտեի ձեռքը։ Ղեկավարվելով Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեից ստացված հրահանգներով, տեղական ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն չի մեկուսացնում դաշնակ պաշտոնյաներին, որոնց թվում և Կարսի նահանգապետ Կորգանովին, զորքերի հրամանատար Փիրումովին և ուրիշներին։ Անդամ Կարսի ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն ղեկավար զինվորականների և պաշտոնյաների խորհրդակցություն է հրավիրում, ուր վերջինները ցանկանալով բռնացնել ապստամբների զգոնությունը, առերես խոստանում են ճանաչել սովետական իշխանությունը։ Սակայն շարունակելով իրենց կոնտրռևոլուցիոն գործունեությունը, նրանք սկսում են պրովոկացիոն հայտարարություններ անել սովետական իշխանության հասցեին և պատրաստվել տապալել այն։ Նրանց հաջողվում է մայիսի 11-ին ապստամբների դեմ հանել այսպես կոչված պահակային գումարտակը, որը կազմված էր զինվորական ծառայությունից խուսափող էլեմենտներից և քաղաքի սպեկուլյանտներից։ Քաղաքում մթնոլորտը լարվում է։ Ընդհարումը դաշնակների հետ ռեալ է դառնում։ Անակնկալներից խուսափելու համար ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն փոխադրվում է Կարսի ամրոցներից մեկի մեջ։

Մայիսի 12-ին դաշնակները փորձում են հարձակվել ամրոցի վրա, որի դեմ ուղարկում են դաշնակներից խաբված գաղթականների մի բազմություն և սպեկուլյանտներից կազմված ամբոխի։ Սակայն ամբոխը ցրվում է օդի մեջ արձակված մի քանի թնդանոթային և հրացանային համազարկերից։

Սարիղամիշում ապստամբությունը սկսվում է մայիսի 10-ի գիշերը։ Ռազմա-ռևոլուցիոն կոմիտեի կարգադրությամբ, որի գլուխն էր անցել բոլշևիկ Ա. Ճուղուրյանը, գիշերը զինվորները շրջապատում են քաղաքային վարչությունը և պահանջում, որ նա հանձնվի ռազմա-ռևոլուցիոն կոմիտեին։ Ռազմա-ռևոլուցիոն կոմիտեի այս առաջարկը վարչությանը ներկայացնողին դաշնակները սպանում են։ Տեղի է ունենում զինված ընդհարում դաշնակների և զինվորների միջև, որի ժամանակ սպանվում է մաուզերիստների ղեկավարը։ Դաշնակները ստիպված են լինում հանձնվել և ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն նրանց բանտարկում է, ինչպես և բանտարկում է մյուս ակտիվ դաշնակներին, բացի մի քանիսից, որոնք կարողանում են թաքնվել։ Քաղաքը անցնում է ռազմա-ռևոլուցիոն կոմիտեի ձեռքը։

Կարսից ապստամբները օգնություն են խնդրում Սարիղամիշի ռազմա-ռևոլուցիոն կոմիտեից։ Վերջինս շտապ պատրաստում է մի գնացք և ուղարկում Կարս։ Յուրաքանչյուր վագոնի չորս կողմը դրվում են ավազով լցված տոպրակներ, իսկ տոպրակների ետևից գնդացիրներ։ Սակայն այդ սպառազինված գնացքը Բեգլի-Ահմեդ կայարանից դենը չի կարողանում գնալ՝ գիծը դաշնակների կողմից կտրված լինելու պատճառով և ստիպված է լինում վերադառնալ Սարիղամիշ։ Այսպիսով Սարիղամիշը Կարսից և Ալեքսանդրոպոլից կտրվում է և չի իմացվում, թե ի՞նչ է կատարվում այնտեղ։

Մայիսի 13-ին ապստամբությունը ծագում է Նոր-Բայազետի գավառում։ Գավառի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարն էր աշխատավորների կողմից սիրված և հարգված Հ. Սարուխանյանը, որին դաշնակները 1920 թ. ապրիլին գավառից աքսորել էին ռևոլուցիոն գործունեության համար։ Արմենկոմի հանձնարարությամբ նա մայիսին վերադառնում է Բայազետ, այնտեղ ապստամբությունը կազմակերպելու և ղեկավարելու համար։

Ապստամբությունը Նոր-Բայազետում սկսվում է Ղարանլուխ (այժմ Մարտունի) գյուղից։ Այդ գյուղում կանգնած ռազմա-միլիցիոներական գնդի զինվորների մեջ բոլշևիկների տարած աշխատանքը տալիս է իր արդյունքը—զինվորներն ապստամբվում են դաշնակցական կառավարության դեմ։ Ապրստամբվում են և այդ օրը Բասարգեչարից ինքնակամ կերպով Ղարանլուխ եկած մի վաշտի զինվորները, որոնք դժգոհ էին դաշնակցական կառավարության ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած ջարդարար քաղաքականությունից և ընդհարումներից հարևան եղբայրական ժողովուրդների հետ, ինչպիսի նպատակով և այդ զորամասը դաշնակցական կառավարության կողմից ուղարկված էր Բասարգեչար։ Հրամանատարական կազմի բոլոր ջանքերը, անջատելու զինվորներին բոլշևիկներից՝ անհաջողության են մատնվում։ Ապստամբները կազմակերպում են ռազմա-ռևոլուցիոն կոմիտե՝ Հ. Սարուխանյանի գլխավորությամբ։ Ղարանլուխ գյուղն անցնում է ապստամբների ձեռքը, որոնք բանտարկում են Նոր Բայազետի գավառում գործող դաշնակցական կառավարության զորամասերի հրամանատար գեներալ Սիլիկովին, որն ապստամբության ժամանակ գտնվում էր Ղարանլուխում և փորձում էր ճնշել այն։ Թողնելով իրենց ուժերի մի մասը Ղարանլուխում, ապրստամբները մյուս մասի հետ շարժվում են դեպի Նոր-Բայազետ։ Ճանապարհին նրանց միանում են Ղարանլուխի շրջանի գյուղերի գյուղացիները։ Մայիսի 17-ին, կռվից հետո, ապստամբները գրավում են քաղաքը։

Շամշադինում ապստամբությունը բռնկվում է մայիսի 14-ին, իսկ Քարվանսարայի (այժմ Իջևան) շրջանում՝ մայիսի 19-ին։ Շամշադինում և մի շարք ուրիշ գյուղերում՝ Ղրղիում, Նորաշենում, Զորաթանում և այլ գյուղերում հայտարարվում է սովետական իշխանություն։ Մայիսի 20-ին Քարվանսարայի ապստամբ գյուղացիները և նրանց միացած կառավարական 6-րդ գնդի զինվորները վերցնում են Քարվանսարան, գրավում պետական հիմնարկները և ձերբակալում դաշնակ գործիչներին։ Մայիսի 21-ին Քարվանսարայում կազմակերպված ռազմա-ռևոլուցիոն կոմիտեն Քարվանսարայում հայտարարում է սովետական իշխանություն։ Ռնակչությունն այդ ակտը ընդունում է ցնծությամբ, քաղաքը զարդարվում է կարմիր դրոշակներով։ Քարվանսարայից ապստամբները շարժվում են դեպի Դիլիջան, որը և գրավում են։ Վախենալով Շամշադինի և Քարվանսարայի շրջանների գյուղացիների ռևոլուցիոն տրամադրությունից, դաշնակների դեմ պայքարելու նրանց վճռականությունից և այդ բոլորից բխող հնարավոր բարդություններից, դաշնակցական կառավարությունը օգնություն է խնդրում իր տերերից— իմպերիալիստական պետություններից։ Մայիսի 22-ին նա Վրաստանի իր դիվանագիտական ներկայացուցչին հեռագրում է հետևյալը. «Բոլշևիկները գրավեցին Դիլիջանը։ Կատեգորիկ կերպով դաշնակիցներից օգնություն խնդրեցեք...»[1]

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆոնդ № 68 200, գործ № 764, թ. 139։

1920 թվի մայիսին տեղի է ունենում ապստամբություն և Զանգեզուրում։

Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումից հետո աշխուժանում են պարտիական կազմակերպությունների աշխատանքները Զանգեզուրում։ Զանգեզուրի բոլշևիկները կապեր են հաստատում Բաքվի և Լեռնային Ղարաբաղի բոլշևիկների հետ։ Շուտով Կարմիր Բանակը մաքրում է Ղարաբաղը դաշնակցական և մուսավաթական հրոսակախմբերից և մոտենում Զանգեզուրի սահմաններին։ Զանգեզուրի գյուղացիությունը անհամբեր սպասում էր Կարմիր Բանակի գալուն։ Մի թղթակցությունում այդ մասին կարդում ենք. «Զանգեզուրի գյուղացիությունն անհամբեր սպասում է Կարմիր Բանակին։ Խնձորեսկ գյուղը երբ իմանում է, որ կարմիր զորքը մտել է Շուշի, դուրս է գալիս կարմիր դրոշակներով, բայց կառավարական զորքը վրա է հասնում ցրում բոլորին... Զանգեզուրի գյուղացիությունը սպասում է կարմիրների գալուն, որ պիտի փրկեն նրանց դաշնակցականների ձեռքից»։[1]

Մայիսի 20-ին ապստամբվում են Սիսիանի մի շարք գյուղեր՝ Բռնակոթ, Շաղաթ, Ղարաքիլիսա և ուրիշները։ Ապստամբները կազմակերպում են ռազմա-ռևոլուցիոն կոմիտե։ Մայիսի 28-ին ապստամբվում է նաև Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղը, որտեղ ուժեղ էր բոլշևիկյան կազմակերպությունը։ Խնձորեսկում հայտարարվում է սովետական իշխանություն, բանտարկվում են դաշնակցական պաշտոնյաները և զինվորականները։

Արմենկոմը փորձում է ապստամբություն կազմակերպել և Երևանում։ Բայց որովհետև քաղաքում բավարար չափով աշխատանք չէր տարված, մանավանդ Քանաքեռում կանգնած զինվորական մասերում, ուստի և Արմենկոմին չի հաջողվում կիրառել իր այդ մտադրությունը։

Հերոսական մայիսյան ապստամբությունը պարտվեց շնորհիվ Արմենկոմի և Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի կազմի մեջ խցկված դավաճանական տարրերի գործունեության։ Արմենկոմը և Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն թույլ տվին կոպիտ քաղաքական և ռազմական սխալներ։ Այն ժամանակ, երբ պետք էր գործել համարձակորեն և անցնել հարձակման թշնամու դեմ, նրանք հայտաբերեցին անվճռականություն և դանդաղկոտություն, որի շնորհիվ ապստամբությունները առանձին վայրերում տեղի ունեցան տարբեր ժամանակներում և վերածվեցին իրարից կտրված հլուլթների։

Վ. Ի. Լենինը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի նախօրյակին խոսելով զինված ապստամբության մասին, հիշեցնում էր Կ. Մարքսի խոսքերը, թե «զինված ապստամբությունը, ինչպես և պատերազմը, արվեստ է»։ «Այդ արվեստի գլխավոր կանոններից,— գրում է Վ. Ի. Լենինը,— Մարքսն առաջադրեց հետևյալները.

1. Երբեք չխաղալ ապստամբության հետ, այլ սկսելով այն՝ հաստատ իմանալ, որ հարկավոր է մինչև վերջ գնալ։

2. Անհրաժեշտ է ուժերի մեծ գերակշռություն հավաքել վճռական վայրում, վճռական մոմենտին, որովհետև, հակառակ դեպքում, թշնամին ավելի լավ նախապատրաստություն և կազմակերպություն ունենալով, կոչնչացնի ապստամբներին։

[1] «Կոմունիստ», 1920 թ., 15 հուլիսի № 48։

3. Քանի որ ապստամբությունն սկսված է, պետք է գործել ամենամեծ վճռականությամբ և անպատճառ, անպայման հարձակման անցնել։ «Պաշտպանվելը՝ զինված ապստամբության մահն է»։

4. Պետք է աշխատել թշնամուն հանկարծակիի բերել, գտնել այն մոմենտը, երբ նրա զորքերը ցրված են։

5. Պետք է աշխատել ամեն օր, թեկուզ փոքրիկ հաջողություններ ձեռք բերել (կարելի է ասել ամեն ժամ, եթե գործը վերաբերում է մի քաղաքի), ինչ էլ լինի՝ պահպանելով «բարոյական գերակշռությունը»։

Բոլոր ռևոլուցիաների դասերը զինված ապստամբության վերաբերմամբ Մարքսն ամփոփեց «պատմության մեջ ռևոլուցիոն տակտիկայի ամենամեծ վարպետ Դանտոնի խոսքերով՝ համարձակություն, համարձակություն և դարձյալ համարձակություն»։[1] Թե Արմենկոմը և թե Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն անտեսեցին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների ուսմունքի այս դրույթը զինված ապստամբության մասին։

Ապստամբության պարտության գործում դեր խաղաց և անգլո-ամերիկյան ինտերվենտների օգնությունը դաշնակներին։ Հայաստանի և Անդրկովկասի «գերագույն կոմիսար» ամերիկյան գնդապետ Հասկելը և մենշևիկները պատրաստվում էին տնտեսական բլոկադայի ենթարկել Հայաստանը— արգելել ամեն տեսակի ապրանքների մուտքը Հայաստան մենշևիկյան Վրաստանի երկաթուղով։ Նույն Հասկելի կարգադրությամբ Ալեքսանդրոպոլի ամերիկյան կոմիտեն մայիսի մեկից հետո սկսեց ցաքուցրիվ տալ իր տրամադրության տակ գտնվող մթերքները, ցանկանալով խուճապ առաջացնել քաղաքում և այդ ճանապարհով հարվածել ապստամբությանը Ալեքսանդրոպոլում։

Ապստամբության առաջին օրերին իր գլուխը կորցրած դաշնակցական կառավարությունը՝ օգտագործելով Արմենկոմի և Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի սխալները, կարողանում է ժամանակ շահել իր ուժերը հավաքելու և նրանց ուղղելու համար ապստամբների դեմ։ Կառավարությունը երկրում հայտարարում է արտակարգ դրություն։ Երկրի բոլոր կոնտրռևոլուցիոն պարտիաները՝ ժողովրդականները (հայ կադետները), մենշևիկները, էսերները, սպեցիֆիկներն ու ուրիշները, ինչպես և հոգևորականությունը դաշնակների գլխավորությամբ միասնական ճակատով հանդես են գալիս ճնշելու ապստամբությունը։ Դաշնակցական կառավարությունն իր ուժերն առաջին հերթին ուղղում է ապստամբության կենտրոնի՝ Ալեքսանդրոպոլի դեմ։ Նա Ալեքսանդրոպոլի դեմ է ուղարկում ֆամբապետ Սեպուհի գլխավորությամբ մաուզերիստներից, դաշնակցական պարտիայի անդամներից և կանոնավոր բանակի զորամասերից կազմված մի ջոկատ։ Ջոկատի վստահելի մասը կազմում էին դաշնակները և մաուզերիստները, իսկ կանոնավոր զորամասերի զինվորները անհուսալի էին կառավարության համար և առաջին ֆրոնտի ընդհարման դեպքում կանցնեին ապստամբների կողմը։ Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի տրամադրության տակ եղած զինված ուժերը բավական էին այդ ջոկատը ջախջախելու համար, բայց շնորհիվ իր անվճռականության ու տատանումների, ինչպես նաև դավաճանների գործունեության՝ չկարողացավ մարտի հանել իր ուժերը։ Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի զինված ու-

[1] Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, երկու հատորում, Երևան, 1949 թ., 2-րդ հատոր, էջ 130—131։

ժերի ղեկավարի պոստն էր կարողացել սողոսկել գնդապետ Ղորղանյա՛ն, որն, ինչպես պարզվեց հետո, կապված լինելով դաշնակների հետ՝ նրանց հանձնարարությամբ սաբոտաժի էր ենթարկում դաշնակցական կառավարության ուժերի ջախջախումը, անելով խուճապային հայտարարություններ այն մասին, որ այդ խնդիրը իրագործելու համար ապստամբներն իբր թե չունեն անհրաժեշտ չափով ուժեր։ Միակ ռազմական գործողությունը, որ տեղի ունեցավ՝ դա Երևանի ուղղությամբ հետախուզության դուրս եկած զրա՛հապատ գնացքի ընդհարումն էր Սեպուհի ջոկատի հետ։ Տեսնելով, որ իր ջոկատի կանոնավոր զորամասերի զինվորներն անհուսալի են իրեն համար և որ նա կարող է պարտվել, Սեպուհը թողնում է երկաթգիծը և գյուղերի վրայով շարժվում դեպի Ալեքսանդրոպոլ։ Մայիսի 14-ին ջոկատը մտնում է քաղաք։

Ալեքսանդրոպոլը վերցնելուց հետո դաշնակցական կառավարությունն իր ուժերն ուղղում է ապստամբած մյուս վայրերի դեմ և առանձին-առանձին ճնշում ապստամբությունները։ Մայիսի 13-ին Կարսում ապստամբությունը պարտվում է։ Կարսից Ալեքսանդրոպոլ նահանջելիս, Արգինե գյուղի մոտ, դաշնակների հետ ընդհարման ժամանակ զոհվում է Կարսի ապստամբների ղեկավար բոլշևիկ Ղ. Ղուկասյանը։ Կտրված լինելով դրսից և օգնություն չստանալով՝ ապստամբները Սարիղամիշում ստիպված են լինում մայիսի 13-ին զիջել քաղաքը։ Մայիսի 19-ին, համառ կռվից հետո, դաշնակները վերցնում են Նոր-Բայազետը։ Դաշնակցական ճիվաղները չտեսնված տանջանքների ենթարկեցին Նոր-Բայազետի գավառի ապստամբների ղեկավար Հ. Սարուխանյանին և գազանաբար սպանեցին նրան։ Շամշադինի և Քարվանսարայի շրջաններում կռիվները ապստամբների ու դաշնակների միջև երկարատև և կատաղի բնույթ են ստանում։ Շամշադինի և Քարվանսարայի ապստամբ գյուղացիները ցուցաբերում են հերոսական պայքարի փառավոր նմուշներ, բայց վերջիվերջո ստիպված են լինում թողնել Հայաստանի սահմանները և անցնել Սովետական Ադրբեջան, որտեղ նրանք մտնում են Կարմիր Բանակի շարքերը։ Զանգեզուրում կռիվները նույնպես երկարատև և համառ բնույթ են ստանում։

Ճնշելով ապստամբությունը, դաշնակցական կառավարությունը հաշվեհարդար է տեսնում ապստամբած ժողովրդական մասսաների հետ։ Հայաստանի բոլոր կոնտրռևոլուցիոն ուժերը դաշնակների գլխավորությամբ չտեսնված դաժան հալածանքներ սկսեցին աշխատավորների դեմ։ Ապստամբներին պատժելու համար կառավարությունն ստեղծում է արտակարգ դատարաններ։ Հարյուրավոր ռևոլուցիոն բանվորներ ու գյուղացիներ գնդակահարվեցին և սպանվեցին Հայաստանի զանազան վայրերում։ Դաշնակները առանձնապես կատաղի արշավանք սկսեցին Հայաստանի բանվորների ու գյուղացիների ավանգարդի՝ կոմունիստական պարտիայի դեմ։ Դաշնակ դահիճների ձեռքով ընկան հայ ժողովրդի ազատության, նրա այսօրվա երջանիկ կյանքի համար պայքարող, Լենինի-Ստալինի մեծ պարտիայի հավատարիմ զավակներ Ս. Ալավերդյանը, Ս. Մուսայելյանը, Հ. Սարուխանյանը, Ղ. Ղուկասյանը, Բ. Ղարիբջանյանը, Բ. Բատիկյանը, Ե. Սեվոյանը, Ե. Մկրտումյանը, Վ. Ալեքսեևը և ուրիշ շատեր։

Դաշնակցական կառավարության գազանությունները Սովետական Ռուսաստանի, Սովետական Ադրբեջանի և Վրաստանի աշխատավորների մեջ մեծ վրդովմունք առաջ բերեց, որոնք իրենց բողոքի ձայնը բարձրացրին։

Մայիսյան ապստամբությանը ակտիվորեն մասնակցեց Հայաստանի Կոմունիստական Երիտասարդական Միությունը՝ «Սպարտակը»։

Ապստամբության պարտությունից հետո դաշնակցական կառավարությունը շտապեց հանգստացնել իր տերերին— իմպերիալիստական պետություններին, որոնք վախենում էին, որ Հայաստանը ևս կարող է Ադրբեջանի պես դուրս գալ իրենց ձեռքից։ Դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրը կարգադրում է նույն կառավարության ներկայացուցչին Վրաստանում՝ հայտնել իմպերիալիստական պետությունների կառավարություններին հետևյալը. «Իմ անունից հեռագրեք հնդկա-եվրոպական հեռագրով կամ ռադիոյով Հռոմ, Փարիզ, Լոնդոն և Վաշինգտոն, որ բոլշևիկյան շարժումը Հայաստանում... ճնշված է...»[1] Դատարկ սնապարծություն էր դաշնակի այդ հայտարարությունը։ Հայաստանի բանվորները ու գյուղացիները ոչ միայն չդադարեցրին, այլ, ընդհակառակը, ավելի ուժեղացրին իրենց պայքարը բոլշևիկների ղեկավարությամբ սովետական իշխանության հաղթանակի համար, մինչև որ նրանք հասան իրենց նպատակին՝ սովետական կարգերի Հաստատմանը Հայաստանում 1920 թ. նոյեմբերի 29-ին։

Մայիսյան փառապանծ ապստամբությունը սովետական իշխանության հաղթանակի համար Հայաստանի բանվորների և գյուղացիների կողմից մղվող պայքարի ամենափառավոր էջերից մեկն է հանդիսանում։

3. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսյան ապստամբությունը՝ քաղաքացիական պատերազմի մի դպրոց էր, որի բովով անցան Հայաստանի բանվորները ու գյուղացիները։ Հաշվի առնելով ապստամբության դասերը, նրանք բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ եռապատիկ եռանդով շարունակեցին իրենց պայքարը դաշնակների տիրապետության դեմ՝ լի հավատով դեպի իրենց հաղթանակը։

Մայիսյան ապստամբությունից հետո քաղաքացիական կռիվները Շամշադինում շարունակվեցին մինչև հունիսի վերջը։ Զանգեզուրի աշխատավորները 11-րդ բանակի զորամասերի օգնությամբ շարունակեցին իրենց պայքարը դաշնակների դեմ։ 1920 թ. հուլիսից մինչև հոկտեմբերը Զանգեզուրի մեծ մասում հաստատվեցին սովետական կարգեր։ Նոր-Բայազետի գավառում, մայիսյան ապստամբությունից հետո, ընդհարումներ տեղի ունեցան Դալիքարդաշ (այժմ՝ Սարուխան) և ուրիշ գյուղերում դաշնակցական բռնակալների և գյուղացիների միջև։

Խոսելով Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի մասին, ընկեր Ստալինը գրում է. «Ահա մի քանի փաստեր, որոնք հասցրին Հայաստանի սովետականացմանը։ Դաշնակների, Անտանտայի գործակալների կործանարար քաղաքականությունը երկիրը հասցնում է անարխիայի ու աղքատության։ Դաշնակների սարքած պատերազմը Թուրքիայի դեմ վերջին ծայրահեղության է հասցնում Հայաստանի ծանր դրությունը։ Սովից ու իրավազրկությունից տանջված՝ Հայաստանի հյուսիսային գավառները ապստամբում են նոյեմբերի վերջին և ստեղծում են Հայաստանի ռևոլյուցիոն ռազմական Կոմիտե... Նոյեմբերի 30-ին Հայաստանի Ռևկոմի նախագահից ընկեր Լենինի անունով ստացվում է ողջույնի հեռագիր, որով հաղորդվում է Սովետա-

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆոնդ № 68/20, գործ № 764, թ. 118։

կան Հայաստանի ծննդյան, և Ռեկոմի կողմից Դիլիջան քաղաքը գրավելու մասին»։[1]

Դաշնակների ներքին կործանարար քաղաքականության հետ մենք արդեն ծանոթացանք։ Այժմ համառոտակիորեն կանգ առնենք դաշնակցական Հայաստանի և քեմալական Թուրքիայի միջև 1920 թ. աշնանը ծագած պատերազմի վրա։ Խոսելով այդ պատերազմի մասին, ընկեր Ստալինը գրում է. «Դաշնակների Հայաստանն ընկավ, անկասկած, որպես Անտանտայի պրովոկացիայի զոհ, որը նրան գրգռեց Թուրքիայի դեմ, և հետո նրան խայտառակ կերպով լքեց— թողեց թուրքերի հոշոտմանը»։[2]

1920 թ. օգոստոսի 10-ին Անտանտայի պետությունների և Թուրքիայի սուլթանական կառավարության միջև Սևրում (Ֆրանսիա) հաշտության պայմանագիր կնքվեց։ Պայմանագրի 6-րդ հատվածի 88—91 հոդվածներով նախատեսվում էր «անկախ» Հայաստանի կազմակերպումը Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների սահմաններում։ Այդ ապագա «անկախ» Հայաստանի սահմանները պիտի որոշեր ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը։ Ազգերի Լիգան հարց էր հարուցել, որ հենց ԱՄՆ-ն էլ վերցնի Հայաստանի «մանդատը»։ Ելնելով նվաճողական քաղաքականությունից, ԱՄՆ-ը դեմ չէր Ազգերի Լիգայի առաջարկին։ Սակայն ամերիկյան իմպերիալիստները չէին բավարարվում միայն Հայաստանի «մանդատով»։ Հայաստանը առանձին վերցրած նրանց չէր գոհացնում։ Նրանք համաձայնվում էին վերցնել Հայաստանի «մանդատը» միայն այն պայմանով, եթե նրանց կտրվի նաև «մանդատ» Անդրկովկասի, Թուրքիայի և Մերձավոր Արևելքի վրա։ Այսպիսով, Հայաստանի «մանդատի» շիրմայի տակ ամերիկյան իմպերիալիստները ցանկանում էին զավթել Անդրկովկասը, պոկելով նրան անդրկովկասյան կոնտրռևոլուցիոն կառավարությունների միջոցով Սովետական Ռուսաստանից։ Նրանց նպատակն էր նաև տիրանալ Թուրքիային և ամբողջ Մերձավոր Արևելքին։ Այս պլանը իրագործելու համար ԱՄՆ-ում անգամ սկսվել էր կամավորների հավաքագրում։[3] Որ հերթին անգլիական իմպերիալիստները Հայաստանին «օգնելու» պատրվակի տակ ձգտում էին զավթել Անդրկովկասը, իսկ ֆրանսիական իմպերիալիստները՝ Կիլիկիան և Սիրիան։

Ընդառաջելով դաշնակներին և Սևրի պայմանագրում մտցնելով «անկախ» Հայաստանի կազմակերպման հարցը, իմպերիալիստական պետությունները մտածում էին միմիայն իրենց շահերի և ոչ թե հայ ժողովրդի մասին։ Այսպիսով Սևրի պայմանագիրը չէր լուծում Արևմտյան Հայաստանի հարցը։

Ինչպես արդեն ասվեց վերևում, Սևրի պայմանագիրը կնքված էր սուլթանական կառավարության հետ, իսկ այնինչ Անատոլիայում և Արևմտյան Հայաստանում իշխանության տերերն էին քեմալականները, որոնք պայքարում էին այդ պայմանագրի ոչնչացման համար։ Դաշնակցական կառավարությունն իր ուժերով ի վիճակի չէր կիրառել Սևրի պայմանագրի այն հատվածը, որը վերաբերում էր Արևմտյան Հայաստանին։ Այդ խնդրի լուծումը նա կապում էր ապագա «մանդատյորս» պետության հետ։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 158—159։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 155։

[3] Այս մասին տես Б. Е. Штейн, „Русский вопрос" на Парижской мирной конференции", Москва, 1948 г., стр. 343.

Իմպերիալիստական պետությունները, և առաջին հերթին Անգլիան, այդ ժամանակ շահագրգռված էին քեմալականների շարժման ճնշմամբ։ Նրանք իրենց ձեռքին խաղալիք դարձած դաշնակցական կառավարությանը պատերազմի էին հրահրում քեմալականների դեմ՝ հասնելու համար իրենց այդ նպատակին։ Միաժամանակ այդ նույն իմպերիալիստական պետությունները իմանալով Անդրկովկասը զավթելու քեմալականների մտադրությունը, նրանց ևս պատերազմի էին հրահրում Հայաստանի դեմ, հույս ունենալով, որ վերջին հաշվով իրենց կհաջողվի իրար դեմ հանել Սովետական Ռուսաստանին և քեմալական Թուրքիային։

1920 թ. հունիսին և հուլիսին նոտաների փոխանակություն տեղի ունեցավ դաշնակցական և Անգորայի կառավարությունների միջև՝ դաշնակների կողմից Օլթիի շրջանում ձեռնարկած ռազմական գործողությունների առթիվ։

Իր առաջին նոտայում, հունիսի վերջերին, անգորական կառավարությունը առաջարկում էր դաշնակցական կառավարությանը դադարեցնել ռազմական գործողությունները Օլթիի շրջանում և խաղաղ ճանապարհով լուծել վիճելի տերիտորիալ հարցերը։ Նոտայում, սակայն, ոչինչ չէր ասվում Հայաստանի սահմանների մասին։ Երկրորդ նոտայում, հուլիսի սկզբներին, քեմալական կառավարությունը բաց է անում իր քարտերը, հայտարարելով, որ նա տերիտորիալ խնդիրներում կանգնած է Բրեստ-Լիտովսկու պայմանագրի և Բաթումում կնքված կոնվենցիայի տեսակետի վրա։[1] Քեմալական կառավարությունը հայ ժողովրդի նկատմամբ վարում էր նվաճողական քաղաքականություն ու ձգտում էր իր ձեռքում պահել ոչ միայն թուրքերի կողմից նվաճած Արևմտյան Հայաստանը, այլև զավթել Արևելյան Հայաստանի մի զգալի մասը։ Դաշնակցական կառավարությունը իր վերջին պատասխանում հայտնում էր, որ ապագա Հայաստանի սահմանները որոշելու են Անտանտայի պետությունները, և որ մինչև այդ հարցի լուծումը նրա զորքերը չեն անցնելու 1914 թ. ռուս-թուրքական սահմանը։[2] Դաշնակցական կառավարությունն իր հերթին, այսպիսով, հայ ժողովրդի նկատմամբ վարում էր կործանարար քաղաքականություն, կապելով նրա բախտը իմպերիալիստական պետությունների հետ, որոնք բոլորովին էլ չէին մտածում նրա մասին։

Հայ ժողովրդի փրկությունը կապված էր Սովետական Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի օգնության հետ։ Եվ Սովետական Ռուսաստանը հայ ժողովրդին առաջարկեց իր օգնությունը։ 1920 թ. հուլիսին նա դիմեց դաշնակցական կառավարությանը մի հայտարարությամբ, որի մեջ ասվում էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը իր պատրաստակամությունն է հայտնում օժանդակել հայ ժողովրդի բարգավաճման գործին, օգնել նրան ստեղծելու իր հարևանների հետ խաղաղ պայմաններ աշխատանքի համար։ Այդ հայտարարության մեջ ասված էր նաև, որ Սովետական Ռուսաստանը մտադիր է հարց հարուցել հայերի վաղեմի և օրինական տերիտորիան՝ Արևմտյան Հայաստանը վերադարձնելու հայ ժողովրդին։[3]

---

[1] Թուրքական նոտաները, տես Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆոնդ № 68 200, գործ № 402, թ. թ. 13 և 18։

[2] Դաշնակցական կառավարության պատասխանները տես նույն ֆոնդի և գործի 16 և 19 թերթերում։

[3] Սովետական Ռուսաստանի Արտաքին Գործերի Ժող. Կոմ. հայտարարությունը տես Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գ. № 769ր, թ. 261։

Սովետական Ռուսաստանի առաջարկը հայ ժողովրդի համար միակ ընդունելի և ճիշտ ուղին էր։ Անհրաժեշտ էր հրաժարվել իմպերիալիստների կեղծ խոստումներից և ընդունել Սովետական Ռուսաստանի օգնությունը։ Սակայն հանդիսանալով իմպերիալիստական պետությունների անարդ գործակալները՝ դաշնակները ամուր կառչած մնացին այդ պետություններին և մերժեցին Սովետական Ռուսաստանի առաջարկը։

Իմպերիալիստական պետությունների օգնության հույսով դաշնակների սարքած ռազմական գործողությունները Օլթիի շրջանում հնարավորություն տվին քեմալականներին՝ հարձակման անցնել Հայաստանի դեմ։ Քեմալական Թուրքիան վաղուց էր պատրաստվում այդ հարձակման և արդեն կենտրոնացրել էր Հայաստանի սահմաններում բավական թվով զորքեր։ 1920 թ. աշնանը սկսվեց պատերազմ դաշնակցական Հայաստանի և քեմալական Թուրքիայի միջև։ Դաշնակցական կառավարությունը խայտառակորեն պարտվեց։ Անցնելով հարձակման, թուրքական զորքերը սեպտեմբերին գրավեցին Սարիղամիշը, հոկտեմբերի 30-ին՝ Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը։

Դաշնակցական կառավարության բոլոր դիմումները իմպերիալիստական պետություններին մնացին անհետևանք։

Այսպես, ռազմական գործողությունները սկսվելուց հետո, դաշնակցական կառավարությունը դիմեց Անգլիայի ներկայացուցչին Անդրկովկասում գնդապետ Ստոքսին, ինչպես և Ֆրանսիայի ու այլ պետությունների ներկայացուցիչներին։ Սարիղամիշի ուղղությամբ սկսված թուրքական զորքերի առաջացման կապակցությամբ դաշնակցական կառավարության ներկայացուցիչը Վրաստանում 1920 թ. սեպտեմբերի 30-ին լինում է Անդրկովկասում գտնվող դաշնակից պետությունների ներկայացուցիչների մոտ և օգնություն խնդրում։ Արդյունքների մասին նույն օրը նա զեկուցում է իր կառավարությանը հետևյալը. «... Ես խնդրեցի նրանց չմերժել անմիջապես իրազեկ դարձնելու իրենց կառավարություններին Հայաստանում ստեղծված դրության մասին և միջոցներ ձեռք առնել հասցնել շուտափույթ օգնություն, որը կարող է կայանալ նախ՝ հնարավոր դեսանտի և ծովային դեմոնստրացիայի մեջ և ապա՝ շտապ կերպով վառելիք հասցնելու մեջ։ Նրանք ինձ լսեցին մեծ ուշադրությամբ, հայտնեցին իրենց համակրության զգացմունքը և խոստացան այս մասին հաղորդել անհետաձգելիորեն իրենց կառավարությանց և խնդրել անհրաժեշտ օգնություն»։[1]

Հոկտեմբերի 3-ին գնդապետ Ստոքսը գալիս է Երևան։ Ռատիսյանի հետ հանդիպման ժամանակ նա հայտարարում է, որ «... Անգլիան անզոր է այժմ ռեալ օգնություն հասցնել Հայաստանին։ Ռմբակոծել կամ վերցնել Տրապիզոնը[2] միտք չունի, որովհետև Անգլիան չի կարող մեծ ուժ հանել տաճկական ափը՝ երկրի խորքերը շարժելու համար, իսկ միայն քաղաքը և նավահանգիստը գրավելը մեծ օգնություն չի հասցնի Հայաստանին»։[3]

Կարսի անկումից հետո դաշնակներն անընդհատ օգնություն էին խնդրում Անտանտայի պետություններից։ Սակայն վերջիններից և ոչ մեկը չօգնեց

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. № 68/200, գործ № 867, թ. 6։

[2] Տրապիզոնի ռմբակոծման և այնտեղ դեսանտ հանելու հարցը դաշնակներն էին բարձրացրել Անգլիայի ու Ֆրանսիայի առջև։

[3] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, նույն ֆոնդ, գ. № 312, թ. 390։

դաշնակների հանցագործ քաղաքականության հետևանքով կատաստրոֆայի առջև կանգնած հայ ժողովրդին։

1920 թ. նոյեմբերի 3-ին դաշնակների Վրաստանում գտնվող դիվանագիտական ներկայացուցիչը լինում է Ստոքսի մոտ և հայտնում Կարսի անկման մասին։ Հանդիպման արդյունքների մասին նա զեկուցում է իր կառավարությանը հետևյալը. «Ձեր շիֆրով հեռագիրը Կարսի անկման մասին ստացա ամսույս 3-ի երեկոյան. իսկույն տեսակցություն խնդրեցի Ստոքսի հետ և հայտնելով այդ լուրը, հարցրի իրենցից սպասվելիք օգնության մասին։ Ինչպես ձեզ հեռագրել էի այդ մասին, նրա պատասխանը շատ պարզ էր այս անգամ։ Նա իսկույն հանեց սեղանի արկղից մի ամբողջ գործ, ցույց տվեց հեռագրերի մի կույտ և ասեց, որ ինքը շարունակ հեռագրում է օգնության մասին և մինչև հիմա ոչ մի պատասխան չի ստացել։ Իր կարծիքով դա նշանակում է, որ Եվրոպան... չի ուզում օգնել մեզ»։[1]

Նույն պատասխանն է տալիս և Ֆրանսիայի ներկայացուցիչը։ «Նույն կարծիքը հայտնեց,— գրում է իր հաղորդման մեջ դաշնակների ներկայացուցիչը,— ինչպես այդ մասին ես ձեզ արդեն գրել էի, և Կորբեյլը իր այցելության ժամանակ»։[2]

Նոյեմբերի 5-ին դաշնակցական կառավարությունը անմիջապես դիմում է ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի արտաքին գործերի մինիստրներին։ Դիմումում ասվում էր. «Ձեր և մեր ընդհանուր թշնամու դեմ միայնակ պայքարում ընկճված Հայաստանը կորցնելով Կարսը և գտնվելով Ալեքսանդրոպոլը կորցնելու նախօրյակին՝ վերջին անգամ կոչ է անում ձեզ, խնդրելով արագացնել ռեալ օգնությունը— միջամտել զինված կոնֆլիկտին և ստիպել հակառակորդին դադարեցնել ռազմական գործողությունները դիվանագիտական ճանապարհով»։[3] Այս դիմումը ևս մյուսների պես մնում է անհետևանք։

Պատերազմի հետևանքով Հայաստանի տնտեսական դրությունը է՛լ ավելի ծանրացավ։ Վերցնելով Ալեքսանդրոպոլը, թուրքերն առաջ շարժվեցին դեպի Ջաջուռ։ Նրանք պատրաստվում էին հարձակվել Երևանի վրա։ Գյուղատնտեսական աշխատանքները կանգ էին առել դեռ աշնանից աշխատող ձեռքերը պատերազմի կապակցությամբ բանակ վերցնելու հետևանքով։ Ավելի վատթարացան երկրի բնակչության կյանքի պայմանները, որոնք շատ ծանր էին դեռ մինչև պատերազմը։ Երևանում հացի նորման 200 գրամից իջեցվեց 100 գրամի։ Պատերազմը վարելու համար դաշնակցական կառավարությունը քամում էր ժողովրդի վերջին միջոցները։ Թանկությունը չտեսնված չափերի էր հասել։ Երկրի ներսում տիրում էր անարխիա, կողոպուտ և թալան։ Դաշնակցական խմբերը թափառում էին գյուղից գյուղ և ահ ու սարսափի մեջ պահելով ժողովրդին՝ կողոպտում նրան։ Ահա թե ինչ էր կատարվում Էջմիածնի գավառում 1920 թ. նոյեմբերին։ «Գավառումս... զինված խմբերի թիվը,— հայտնում էր կառավարության ներքին գործերի մինիստրին Էջմիածնի դաշնակցական զեմստվոյի վարչության նախագահը,— օրեցօր ավելանում է...

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, նույն ֆոնդ, գ. № 867, թ. 10 և 11։
[2] Նույն տեղում։
[3] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 68/200, գ. 867, թ. 82։

Այս բոլոր խմբերը պետական գույքով և զենքերով մտնում են գյուղերը, զոռով բռնադրավում են տները, դուրս վռնդում գյուղացիներին, խլում նրանց գույքերը. ահ ու սարսափը ամենուրեք է։ Այս դրությունը երկար չի կարող շարունակվել։ Ժողովուրդը զզված այս ամենից՝ պետական ամեն տեսակի օժանդակությունից և զոհաբերությունից հրաժարվում է։ Պետական ամբարը բոլորովին դատարկ է։ Ժողովրդից նման պայմաններում հաց դանձել անհնարին է»։[1]

Պատերազմը և նրա հետևանքները մի անգամ ևս ակնառու կերպով ցույց տվին, որ դաշնակցական կառավարությունը ի վիճակի չի պաշտպանելու երկիրը, փրկելու ժողովրդին ոչնչացումից։ Այժմ ժողովրդական ամենալայն մասսաների համար պարզ էր, որ դաշնակների վարած հանցագործ քաղաքականության հետևանքով կործանման եզրին կանգնած ժողովրդի փրկությունը միայն և միայն սովետական կարգերի հաստատման մեջ է կայանում։ Շամշադինից 1920 թ. հոկտեմբերին ուղարկված մի թղթակցությունում, որը արտահայտում էր շրջանի գյուղացիների տրամադրությունը, ասվում էր, որ «Պետք է հավաքենք մեր ուժերը և նորից ընդհարվենք ավազակ կառավարության (դաշնակցական կառավարության— Հ. Է.) հետ՝ վերջնականապես տապալելու նրան»։[2] Նույն տեղից դարձյալ հոկտեմբերին ուղարկված մի ուրիշ թղթակցությունում ասվում էր, որ «Ժողովուրդը կանչում է միաբերան, երբ է հաստատվելու մեր երկրում սովետական իշխանություն, երբ է Կարմիր Բանակը մեզ օգնության գալու»։[3]

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի հաղթանակը Անդրկովկասում ապահովելու և Ադրբեջանում սովետական իշխանությունը ամրապնդելու համար ընկեր Ստալինը 1920 թ. նոյեմբերին ժամանում է Բաքու։ Ընկեր Ստալինի ժամանումը Բաքու մեծ ոգևորություն և ռևոլուցիոն վերելք առաջացրեց Անդրկովկասի բոլոր աշխատավորների մեջ։ Ընկեր Ստալինի Բաքու գալու կապակցությամբ Ադրբեջանի Կոմ. Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն պարտիայի անդամներին, Բաքվի բանվորներին և Ադրբեջանի աշխատավորներին ուղղեց մի դիմում, որը արտահայտում էր Անդրկովկասի բոլոր ժողովուրդների ցանկություններն ու զգացումները։

«Մեզ մոտ, Բաքու է ժամանել,— ասվում էր դիմումում.— ընկեր Ստալինը,— բացառիկ անձնուրացության, եռանդի ու տոկունության բանվորական առաջնորդը, ռևոլուցիոն տակտիկայի միակ փորձված և բոլորի կողմից ճանաչված գիտակը և պրոլետարական ռևոլուցիայի առաջնորդը... Կովկասում և Արևելքում։

Ադրբեջանի Կոմունիստական Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն, գիտենալով ընկեր Ստալինի համեստությունը և դժկամությունը պաշտոնական հանդիսավոր ընդունելությունների նկատմամբ, ստիպված էր հրաժարվել նրա ժամանելու հետ կապված հատուկ ժողովներից։

ԱԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն գտնում է, որ լավագույն ոգևորությունը, լավագույն դիմավորումը, որ մեր պարտիան, Բաքվի պրոլետարները և Ադրբե-

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. № 82/214, գ. 51, թ. 760։
[2] «Կոմունիստ», № 119, 11 հոկտեմբերի 1920 թ.։
[3] «Կոմունիստ», № 129, 22 հոկտեմբերի 1920 թ.։

ջանի աշխատավորները կարող են ցույց տալ մեր թանկագին առաջնորդին և ուսուցչին, կլինի բոլոր ուժերի նորանոր լարումը՝ պարտիական ու սովետական աշխատանքը ըստամենայնի ամրապնդելու համար։

Բոլորը դեպի միահամուռ, մարտական աշխատանք, որն արժանի լինի պրոլետարական կոփված մարտիկ ընկեր Ստալինին՝ Բաքվի պրոլետարական առաջին կազմակերպչին և առաջնորդին»[1]

Մոտիկից ծանոթանալով Անդրկովկասում և Հայաստանում ստեղծված դրության հետ, ընկեր Ստալինը ղեկավար ցուցումներ է տալիս Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկներին՝ ձեռք առնել բոլոր միջոցները ազատագրելու Հայաստանի աշխատավորներին իմպերիալիստական պետությունների լծից, տապալելու նրանց գործակալների՝ դաշնակների կառավարությունը, փրկելու հայ ժողովրդին թուրքական օկուպանտների կողմից սպառնացող ֆիզիկական ոչնչացումից։ Խոսելով 1920 թ. նոյեմբերի վերջերին Հայաստանում ստեղծված դրության մասին, հայ ժողովրդի մեծ ազատարար ընկեր Ստալինը գրում է. «Հազիվ թե կարելի է կասկածել, որ Հայաստանն այլևս փրկության ոչ մի հնարավորություն չունի, բացի մեկից՝ դաշինքից Սովետական Ռուսաստանի հետ»։[2]

Ինչպես մենք այդ ասացինք իր տեղում, Հայաստանի աշխատավորները ուժեղացրին իրենց պայքարը բոլշևիկների ղեկավարությամբ դաշնակցական կառավարության դեմ Մայիսյան ապստամբությունից հետո։ Հոկտեմբերին Հայաստանի բոլշևիկների պարտիայի Կենտրոնական Կոմիտեն դիմեց Հայաստանի աշխատավորներին մի կոչով։ Կոչը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին, նրանց ռևոլոցիոն կորովին ու դասակարգային գիտակցության՝ կազմակերպվելու կոմունիստական պարտիայի դրոշի շուրջը, հավաքելու ցրված ռևոլուցիոն ուժերը, որպեսզի ձեռք-ձեռքի տված Սովետական Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական-դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշակը Հայաստանում»։[3]

Ղեկավարվելով ընկեր Ստալինի ցուցումներով, Հայաստանի՝ աշխատավորները բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ էլ ավելի են ուժեղացնում իրենց պայքարը դաշնակների ատելի լծի դեմ։ Երկաթուղու, որը գտնվում էր դաշնակցական կառավարության հատուկ հսկողության տակ, բանվորները կազմակերպում են հակակառավարական ելույթներ։ Բոլշևիկներն ակտիվ աշխատանք են ծավալում գյուղացիության մեջ, կազմակերպելով նրանց պայքարը դաշնակցական կառավարության դեմ։ Նոր-Բայազետից հայտնում էին դաշնակցական կառավարությանը, որ բոլշևիկները նոուն աշխատանք են ծավալել գավառում և եթե այդպես շարունակվի, ապա գավառը պիտի կորած համարել կառավարության համար։ Զանգեզուրի աշխատավորները հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին 11-րդ բանակի զորամասերի օգնությամբ ուժեղացնում են իրենց պայքարը դաշնակ-խմբապետական բանդաների դեմ։ 1920 թվի հոկտեմբերի վերջերին Գորիսից, ուր հայտարարված

1 Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, Երևան, 1944 թ., էջ 213։

2 Ի. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 435։

3 «Կոմունիստ», № 117, 8 հոկտեմբերի, 1920 թ.։

էր սովետական իշխանություն, ուղարկված մի թղթակցություն պատմում է աշխատավորների այդ պայքարի մասին։ «Հոկտեմբերի 23-ին Ազատության հրապարակի վրա,— ասվում է թղթակցությունում,— բրիգադայի (11-րդ բանակի բրիգադայի— Հ. Է.) հրամանատարն ընդունեց Զանգեզուրի կոմունիստական զորախումբը։ Զորախումբը բաղկացած էր 200 հոգուց, որոնցից շատերը կոմունիստներ են, իսկ մնացածները համակրողներ։

Երեկոյան կազմակերպվեց միտինգ-ներկայացում, որը չափից դուրս աշխույժ անցավ։ Խոսող ընկերների ճառերն ընդունվում էին «Կորչեն դաշնակները», «Կեցցե սովետական իշխանությունը», «Կեցցե կոմունիստական պարտիան» բացականչություններով։ Ներկայացումից հետո, կոմունիստական ջոկատը ճամբա ընկավ կռվելու Նժդեհի դեմ»։[1]

Ժողովրդական ապստամբություններ ճնշելու համար դաշնակցական կառավարությունը դիմում է արտակարգ միջոցառումների՝ հիմնում է զինվորական դատարաններ, բանտարկում և գնդակահարում է բոլշևիկներին, կոնտրռևոլուցիոն տարրերից խմբեր է կազմակերպում և այլն։ Սակայն այդ բոլորը չէին կարող օգնել դաշնակներին։ Նրանց օրերը հաշվված էին։

1920 թվի նոյեմբերի 29-ի առավոտյան Հայաստանի հյուսիսային շրջանների՝ Քարվանսարայի աշխատավորները բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ ապստամբում են դաշնակցական կառավարության դեմ։ Վերջինը զորքեր է ուղարկում ապստամբների դեմ, սակայն այդ զորքերը միանում են ապստամբած իրենց եղբայրներին և իրենց զենքն ուղղում դաշնակցական կառավարության դեմ։ Նոյեմբերի 29-ին ապստամբները Քարվանսարայում կազմակերպում են Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտե, որը Հայաստանը հայտարարում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա։ Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեի հրապարակած դեկլարացիայում ասվում էր. «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ՝ Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիան այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկա։ Այսօրվանից Սովետական Հայաստանի կարմիր դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»։

Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն Հայաստանի բանվորների և գյուղացիների անունից դիմում է Սովետական Ռուսաստանի կառավարության ղեկավար Լենինին ու խնդրում, որ Սովետական Ռուսաստանը օգնության գա նրանց։ Դիմումում ասվում էր, որ «Ողջ հայտնի լինի համաշխարհային ռևոլուցիայի առաջնորդին, որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիները, վրդովված դաշնակցական կառավարության հանցագործ քաղաքականությամբ և երկրում խորացող անարխիայով, ապստամբության գրոշ են բարձրացրել...

Դիլիջանը մեր ձեռքին է։

Ոգևորված ապստամբները առաջ են սլանում՝ վերջնականապես խորտակելու Անտանտայի ատելի գործակալին։

Կատարելով նրանց կամքը և տեղական Ռևկոմ կազմելով, մենք առաջ ենք շարժվում, հավատացած լինելով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ա-

---

1 «Կոմունիստ», № 12, 7 նոյեմբերի, 1920 թ.։

զատարար սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը մեր այս դժվարին պայքարում մեզ օգնության կհասնի։

Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների կողմից մենք խընդրում ենք Սովնարկոմին այդ օգնությունը ցույց տալ մեզ»։[1]

Հայ ժողովրդի մեծ ազատարարներ, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի կազմակերպիչներ Լենինի ու Ստալինի ցուցումներով Ադրբեջանում գտնվող Սովետական Ռուսաստանի 11-րդ բանակի զորամասերը ընկ. ընկ. Օրջոնիկիձեի և Ս. Կիրովի գլխավորությամբ օգնության են հասնում Հայաստանի ապստամբ բանվորներին և գյուղացիներին։ Այդ զորամասերի շարքումն էին գտնվում նաև Շամշադինի և Իջևանի շրջանների Մայիսյան ապստամբության մասնակից գյուղացիները, որոնք ապստամբության ճնշումից հետո անցել էին Սովետական Ադրբեջան։

Ստանալով օգնությունը, ապստամբները 1920 թ. դեկտեմբերի 2-ին մտնում են Երևան։ Ճանապարհին բանկչությունը նրանց և 11-րդ բանակի զորամասերին դիմավորում է մեծ խանդավառությամբ։ Այսպիսով, Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը սովետական իշխանության հաստատման համար հայ ժողովրդի ավագ՝ եղբայր ռուս մեծ ժողովրդի օգնությամբ պսակվում է լիակատար հաղթանակով, որը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի հաղթանակն էր Հայաստանում։

Բոլշևիկյան մեծ պարտիայի առաջնորդներ Լենինն ու Ստալինը ջերմորեն ողջունեցին Հայաստանի աշխատավորներին նրանց հաղթանակի առթիվ։ Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեին ուղարկած հեռագրում Լենինը գրում էր. «Ողջունում եմ իմպերիալիզմի լծից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին», իսկ ընկեր Ստալինն իր «Ուեցցե Սովետական Հայաստանը» հոդվածում գրում է. «Տանջված ու բաղմաչարչար, Անտանտայի ու դաշնակների ողորմածությամբ սովի, քայքայման ու դաղթի մատնված Հայաստանը.— բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանը, այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ որ իրեն հայտարարեց սովետական երկիր»։[2]

Հանդես գալով 1920 թ. դեկտեմբերին Սովետների Համառուսական 8-րդ Համագումարում ժողովրդական Կոմիսարների Սովետի հաշվետու զեկուցումով, Լենինը նշեց Հոկտեմբերյան ռևոլուցիայի հաղթանակը Ադրբեջանում, Հայաստանում և Բուխարայում։ Նա հայտարարեց. «Ես պետք է նաև նշեմ, ընկերներ, որ Արևելքում մեր քաղաքականությունն այս տարվա ընթացքում խոշոր հաջողություններ ունեցավ։ Մենք պետք է ողջունենք Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի Սովետական ռեսպուբլիկաների կազմվելը և ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ոչ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունն առան բանվորների ու գյուղացիների ձեռքը։ Այդ ռեսպուբլիկաները ապացույց ու հաստատումն են այն բանի, որ Սովետական իշխանության գաղափարներն ու սկզբունքները մատչելի են և անմիջապես իրագործելի են ոչ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերության տեսակետից զարգացած են, ոչ միայն սոցիալական այնպիսի հենարան ունեցող երկրներում, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմք ունեցող երկրներում, ինչպիսին գյուղացիությունն է։ Գյուղացիական սո-

[1] «Կոմունիստ», № 162, 1 դեկտեմբերի, 1930 թ.

[2] Ի. Ստալին, Երկեր, հատոր 4-րդ, էջ 458։

վետների գաղափարը հաղթանակեց։ Իշխանությունը գյուղացիների ձեռքում ապահովված է, նրանց ձեռքումն են հողը, արտադրության միջոցները։ Գյուղացիական-սովետական ռեսպուբլիկաների բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի սոցիալիստական ռեսպուբլիկայի հետ արդեն ամրապընդված են մեր քաղաքականության գործնական հետևանքներով»։[1]

Հայաստանի բոլոր աշխատավորները մեծ խանդավառությաբ ողջունեցին սովետական իշխանության հաղթանակը երկրում։ Հայաստանի բոլոր վայրերում տեղի ունեցած միտինգներում և ժողովներում ժողովրդական լայն մասսաներն իրենց ուրախությունն էին հայտնում և խոսք տալիս չխնայել իրենց կյանքը սովետական իշխանության համար, իրենց ջանքերը՝ երկրի վերաշինման համար։

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում ջերմորեն ողջունեցին սովետական Ադրբեջանի աշխատավորները, որոնք Սովետական Ռուսաստանի աշխատավորների հետ միասին անմիջապես օգնության եկան Սովետական Հայաստանին։ Սովետական իշխանության հաղթանակը ողջունեցին նաև Հյուսիսային Կովկասի ժողովուրդները։ Վլադիկավկազում այդ առթիվ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ։ Նիստում ընկեր Ս. Կիրովը հանդես եկավ զեկուցումով սովետական կարգերի հաստատման մասին Հայաստանում։ Հանդիսավոր նիստը որոշեց ողջունել Հայաստանի աշխատավորների հաղթանակը։

Սովետական իշխանության հաստատմամբ նոր, լուսավոր դարաշրջան սկսվեց հայ ժողովրդի պատմության մեջ։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան, սովետական իշխանությունը փրկեցին հայ ժողովրդին նրան սպառնացող կործանումից, տվին նրան սոցիալական ազատագրություն և իսկական ազատություն։ «Միայն Սովետական իշխանության գաղափարը,— գրում է ընկեր Ստալինը,— Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»։[2]

Հայ ժողովուրդը կանգնելով Լենինի-Ստալինի մեծ դրոշի տակ՝ սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին բռնեց զարգացման լուսավոր ուղին, շահագործումից և օտարի ճնշումից ազատ ուղին։

Դաշնակները իրենց տիրապետությունը Հայաստանում շարունակելու նպատակով 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրոպոլում Անգորայի կառավարության հետ ապօրինի կերպով կնքեցին Հայաստանը անդամահատող և ստրկացնող հաշտության պայմանագիր։ Այդ խայտառակ պայմանագրով հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ դաշնակները Հայաստանը փաստորեն դնում էին Թուրքիայի լծի տակ, փոխարենը ստանալով նրա խոստումը օգնել դաշնակներին տապալելու սովետական իշխանությունը Հայաստանում։ Ալեքսանդրոպոլում դաշնակները հրապարակորեն հրաժարվեցին Սևրի պայմանագրից։ Հրաժարմանը նրանք այնպիսի ձև տվին, որ չտեսնված հեգնանք էր հայ ժողովրդի հասցեին։ Այն ժամանակ, երբ քեմալականները ոչնչացնում էին հայերին, որպեսզի նրանք ռուս մեծ ժողովրդի օգնությամբ չկարողանան ստեղծել իրենց պետականությունը, ապրել ազատ, դաշնակները բանակցությունների առաջին նիստում լկտիաբար հայտարարեցին, թե քանի որ քեմա-

---

[1] Լենին, Երկեր, XXVI հատոր, էջ 37։

[2] Ի. Ստալին, Երկեր, հատոր 4, էջ 458։

լական Թուրքիան «... պատրաստակամություն է ցույց տալիս իրական ապահովություն տալ Հայաստանի բարգավաճմանը և տնտեսական զարգացմանը»,[1] ապա նրանք հրաժարվում են Սևրի պայմանագրից։

Ալեքսանդրոպոլի պայմանագրով Հայաստանի տերիտորիան հավասարվում էր 1918 թ. Բաթումի կոնվենցիայով նախատեսված տերիտորիային, Հայաստանը զինաթափվում էր և զրկվում բանակ ունենալու իրավունքից. նա զենքի տակ կարող էր պահել միմիայն 1500 զինվոր, 8 թնդանոթներով և 24 գնդացիրներով. Թուրքիային իրավունք էր վերապահվում իր ներկայացուցիչների միջոցով հսկողություն սահմանել այդ պահանջի կատարման վրա։ Պայմանագիրը իրավունք էր տալիս Թուրքիային ռազմական գործողություններ վարել Հայաստանի տերիտորիայում, եթե նա այդ անհրաժեշտ կգտներ իր անվտանգության տեսակետից և նախատեսնում էր Թուրքիայի օգնությունը դաշնակներին՝ ճնշելու ռևոլուցիոն շարժումը երկրում ու կռվելու Սովետական Ռուսաստանի դեմ։ Սողալով թուրքական իմպերիալիստների ոտքի տակ, դաշնակները նրանց սվինների օգնությամբ ցանկանում էին վերականգնել իրենց արյունոտ տիրապետությունը Հայաստանում։

Սովետական Հայաստանի կառավարությունը Սովետական Ռուսաստանի օգնությամբ չեղյալ հայտարարեց Հայաստանը ստրկացնող այդ պայմանագիրը։

Հայ ժողովրդի նկատմամբ քեմալականների վարած քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում սուլթանների և երիտասարդ թուրքերի վարած ջարդարար քաղաքականությունից։ Եթե առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտասարդ թուրքերի կառավարությունը կատարեց հրեշավոր ոճրագործություն՝ ոչնչացրեց իր հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում ապրող հայերի մեծագույն մասը, ապա նույն քաղաքականությունն էին վարում և քեմալականները Արևելյան Հայաստանի օկուպացված վայրերում 1920 թվի վերջերին և 1921-ի սկզբներին։ Թուրքական բանակի կողմից դրավված Կարսի մարզի և Ալեքսանդրոպոլի գավառի հայ բնակչության այն մասը, որը չկարողացավ փախչել, վայրագաբար կոտորվում էր քեմալականների կողմից։ Պատկերացնելու համար թե ինչ էր կատարվում այդ վայրերում՝ բազմաթիվ փաստաթղթերից բերենք մի քանիսը։ Մեկը՝ Ալեքսանդրոպոլի գավառի երկրորդ շրջանի կոմիսարի զեկուցագիրն է, ուղղված 1921 թ. հունվարի 1-ին Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեին՝ շրջանում տեղի ունեցած դեպքերի մասին, երկրորդը՝ Հայաստանում աշխատող ամերիկյան քաղաքացի Չարլզ Ֆ. Գրանտի ցուցմունքն է իր տեսածի մասին Ջաջուռի գյուղերում, երրորդը՝ ռումինական քաղաքացի Ջ. Իոնեսկուի ցուցմունքն է Կարսի դեպքերի մասին։

Ալեքսանդրոպոլի գավառի երկրորդ շրջանի կոմիսարը Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեին հայտնում էր շրջանի Քավթառլու գյուղում թուրքերի կողմից կատարված սպանությունների մասին։ 1920 թ. դեկտեմբերի 26-ին գյուղն է մտնում թուրքական զորքերի մի ջոկատ։ Ջոկատը գյուղում տեղավորելու համար թուրքերը աշխատանքի են հանում մի խումբ գյուղացի-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆ. № 68/200, գ. № 866, թ. 64։

[2] Ալեքսանդրոպոլի պայմանագիրը տես Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆ. № 40/113, գ. № 7 (ամբողջ գործը)։

ների, որոնց թվում լինում են և ինն կոմունիստներ։ Աշխատանքը վերջանալուց հետո պարզվում է, որ կոմունիստները անհայտացել են։ Շրջանի կոմիսարը հետաքննություն է կատարում ու պարզում, որ կոմունիստներին սպանել են թուրքական զինվորները և դիակները Քավթառլու գյուղի մի բնակչի սայլով գյուղից տարել են դուրս թաղելու համար և որպեսզի թաքցնեն կատարված ոճրագործության հետքերը, վերադարձին նրանք սպանում են նաև սայլի տիրոջը։ «Ինչպես այդ իմ կողմից բազմիցս հաստատված է,— հայտնում էր շրջանի կոմիսարը,— թուրք զինվորները խիստ կարգապահության հետևանքով ոչինչ չեն անում առանց հրամանատարական կազմի գիտության և այստեղից կարելի է եզրակացնել, որ մեր կոմունիստ ընկերները ամենավայրագ կերպով սպանվել են թուրքական հրամանատարական կազմի գիտությամբ»։[1]

Չարլզ Ֆ. Գրանտը իր ցուցմունքներում պատմում է, որ լսելով այն մասին, թե թուրքական զորքերից քիչ առաջ ազատագրված Աղբուլաղի շրջանում հայտնաբերվել են բազմաթիվ սպանված հայ գյուղացիների դիակներ, 1921 թվի մայիսին գնում է այնտեղ տեղում ստուգելու իր լսածը։ Եվ իրոք, նա այնտեղ տեսնում է վայրագաբար սպանված հայ գյուղացիների բազմաթիվ դիակներ։ «Թուրքական մակագրությունները պարկուճների վրա,— հաղորդում է Չարլզ Ֆ. Գրանտը,— և կիսալուսնով ու աստղով մի քանի գընդակի փաթաթաններ կասկած չէին թողնում թե ովքեր են եղել սպանվողները...

Կոտորածի վայրում ընկած պարկուճների ուղիղ, հավասար շարքը պարզ ցույց էր տալիս, որ տեղի ունեցած այդ դեպքը կատարվել է մտրզված և կանոնավոր կերպով ղեկավարված զորքերի ջոկատի կողմից»։[2]

Ռումինական քաղաքացի Վ. Իոնեսկուն, որը չէր կարողացել հեռանալ Կարսից թուրքերի կողմից այն գրավելուց հետո, պատմում է, որ «... Կարսում նա թուրքական բժիշկ Նուրի-բեյից իմացել է, որ քաղաքում սպանվել է 8 հազար հայ»։ Սակայն Վ. Իոնեսկուի կարծիքով «սպանվածների թիվը 10—12 հազարից պակաս չպիտի լիներ. դեռ մեկ ամիս հետո քաղաքի շրջակայքում կարելի էր հանդիպել բազմաթիվ դիակների»։[3]

Ոչ լրիվ տվյալներով քեմալականներն սպանել էին մոտ 30 հազար տղամարդ, 30 հազար կին և երեխա. բացի այդ, սովից մեռածների թիվը հասնում էր 32 հազարի։ Այդ վայրերից թուրքերը աշխատանքի էին քշել Էրզրումի ուղղությամբ մոտ 15 հազար մարդ, որոնց մեծ մասը չվերադարձավ տուն։ Պետական և մասնավոր գույքի հափշտակումը չտեսնված չափերի էր հասել և կրում էր սիստեմատիկ բնույթ։ Տանում էին ամեն ինչ սկսած պատուհանների, դռների շրջանակներից մինչև շոգեքարշերը, վագոնները, գյուղատնտեսական գործիքները։ Ալեքսանդրոպոլում ցերեկով օկուպանտների սայլը կանգնում էր այս կամ այն տան առջև, թուրք զինվորները մտնում էին ներս և հանում իրենց ցանկացած իրերը։ Կարսի մարզից և Ալեքսանդրոպոլի գավառից թուրքերը տարել էին մոտ 298 հազար գլուխ անասուն, մեծ քանակությամբ հացահատիկ և այլն։ Այս բոլորը դեռ քիչ էր թվում օկուպանտնե-

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 217, թ. 81։
[2] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 230, թ. 8։
[3] Նույն ֆոնդ, գ. № 229, թ. 34։

ին։ Երբ նրանք ստիպված եղան 11-րդ բանակի հրամանատարության կրտրուկ պահանջելով թողնել Ալեքսանդրոպոլը, թուրքական հրամանատարությունը լկտիարար սպառնաց հայերին նոր արշավով։ Թուրքական հրամանատարության ներկայացուցիչ Քյազիմ-բեյը քաղաքի ներկայացուցիչների հետ վերջին անգամ հանդիպման ժամանակ հայտարարեց. «Մենք գնում ենք, կարմիրները գալիս են... Եթե մենք մի անգամ էլ գանք՝ քարը-քարի վրա չենք թողնելու Ալեքսանդրոպոլում, երեխաներն անգամ չեն խնայվի, բոլորին կկոտորենք։ Այն, ինչ արինք այս անգամ՝ դեռ բախտավորություն էր. ցգուշացեք մեր երրորդ անգամ այստեղ գալուց»։[1]

Հայաստանի Ռազմա-ռևոլուցիոն Կոմիտեն անմիջապես մի շարք միջոցառումների դիմեց՝ դադարեցնելու համար թուրքերի վայրագությունները։ Իր 1921 թ. հունվարի 7-ի և 18-ի նոտաներում, ուղղված քեմալական կառավարության, նա պահանջեց վերջ տալ կոտորածներին և ժողովրդի գույքի հափշտակմանը։[2]

Այսպիսի բացառիկ ծանր պայմաններում Հայաստանում հաղթանակած երիտասարդ սովետական իշխանությունը Սովետական Ռուսաստանի օգնությամբ, Լենինի և Ստալինի ցուցումներով ձեռնամուխ եղավ նոր, սոցիալիստական կարգերի կառուցման մեծ գործին։

А. Эльчибекян

Победа советской власти в Армении

Резюме

Великая Октябрьская социалистическая революция впервые в мире создала мощную социалистическую державу—Союз Советских Социалистических Республик, одним из равноправных членов которого является Советская Армения, детище Октябрьской революции. Публикуемая статья вкратце излагает историю борьбы рабочих и крестьян Армении за победу советской власти.

Рабочие и крестьяне Закавказья восторженно встретили Великую Октябрьскую социалистическую революцию и под руководством большевиков поднялись на борьбу против создавшейся в Закавказье антисоветской коалиции в лице так называемого Закавказского комиссариата, сейма, за победу советской власти.

«Волна советской революции,—пишет товарищ Сталин,—идущей с севера, бесцеремонно вторглась в царство закавказской коалиции, угрожая его существованию» (И. В. Сталин, Соч., т. 4, стр. 59).

В авангарде этой борьбы шел героический бакинский пролетариат, руководимый славными сынами партии Ленина—Сталина С. Шаумяном, А. Джапаридзе, И. Фиолетовым, М. Азизбековым, А. Микояном и други-

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆ. № 12/114, գ. № 172, թ. 7։

[2] Նոտաները տես Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. № 9, թ. 14—15 և գ. № 318, թ. 69—70։

ми. Установив в Баку советскую власть, трудящиеся Азербайджана высоко подняли знамя борьбы за победу Советов во всем Закавказье.

На борьбу за победу советской власти после Великой Октябрьской социалистической революции поднялись также рабочие и крестьяне Армении. На многочисленных митингах и собраниях они приветствовали Октябрьскую революцию и выражали свою готовность бороться за ее победу в Закавказье и Армении. Большую революционную работу вели большевики среди войск Кавказского фронта, расположенных в Сарыкамыше, Карсе и Александрополе.

В конце октября 1917 г. Александропольский (ныне Ленинакан) Совет рабочих и солдатских депутатов по предложению большевиков, несмотря на яростное сопротивление эсэров, дашнаков и меньшевиков, выносит решение о переизбрании Совета, поскольку он больше не отражал настроения революционных рабочих и солдат; по предложению большевиков Совет выносит также решение об участии на созываемом втором Всероссийском съезде Советов.

Пользуясь временными трудностями Советской России, германо-турецкие захватчики в 1918 г. вторглись в Закавказье. Трудящиеся Закавказья оказали героическое сопротивление захватчикам. Германо-турецким империалистам удалось поставить у власти свою агентуру—дашнаков в Армении, меньшевиков в Грузии, муссаватистов в Азербайджане.

После поражения германской коалиции в первой империалистической войне Закавказье оккупировали англо-американские империалисты, превратившие его в плацдарм для борьбы против Советской России. При помощи дашнаков, меньшевиков и муссаватистов, перешедших теперь на службу к англо-американским империалистам и ставших их послушной агентурой, англо-американские империалисты пытались оторвать Закавказье от Советской России и захватить его.

Кровавое господство дашнаков является одной из самых мрачных страниц истории армянского народа. Злейшие враги армянского народа, презренные наймиты англо-американских империалистов довели до полной катастрофы хозяйство страны, а народ—до грани гибели.

Трудящиеся Армении под руководством большевиков продолжали свою борьбу против ненавистного ига дашнаков и их империалистических хозяев за победу советской власти. Самой славной страницей этой борьбы является героическое Майское восстание 1920 года.

Осенью 1920 г. началась война между кемалистами и дашнаками. Значительная часть Восточной Армении—Карс, Сарыкамыш и др. районы были захвачены турецкими войсками. Продолжая политику физического уничтожения армян, кемалисты истребляли армянское население захваченных районов и грабили его имущество. События 1920 г. еще раз наглядно показали самым широким народным массам, что спасение армянского народа заключается в скорейшем свержении ига дашнаков и империалистов.

Под руководством большевистской партии трудящиеся Армении 29 ноября 1920 г. восстали против дашнаков. Восставшие обратились за

помощью к Советской России. По указанию освободителей армянского народа—Ленина и Сталина славная XI армия, находившаяся в Советском Азербайджане, пришла им на помощь и помогла трудящимся Армении свергнуть иго дашнаков и империалистов и установить советскую власть.

Победа советской власти в Армении открыла новую страницу в истории армянского народа. Освободитель армянского народа великий Сталин, приветствуя победу рабочих и крестьян Армении, писал: «Только идея Советской власти принесла Армении мир и возможность национального обновления» (И. В. Сталин, Соч., т. 4, стр. 413).